# Քրիստոնյա Հայաստան Բացառիկ

2015, ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


# ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆ

## Օրհնվեց 21-րդ դարի երրորդ Մյուռոնը եւ կոչվեց «Հաղթության Մյուռոն»

Սեպտեմբերի 27-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ 21-րդ դարի երրորդ Մյուռոնօրհնեքը:

Մյուռոնօրհնության սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Հայոց Եկեղեցու



Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ, թեմակալ առաջնորդներ ու թեմական պատվիրակություններ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, ազգային բարերարներ, մշակույթի եւ գիտության գործիչներ, Հայաստանից ու աշխարհասփյուռ համայնքներից ժամանած բազմահազար ուխտավոր հայորդիներ:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կյանքի այս կարեւոր պատմական իրադարձությանը Հայոց Եկեղեցու հոգեւոր դասին եւ համայն հայ ժողովրդին աղոթակից էին Ղպտի Ուղղափառ Եկեղեցու, Ասորի Ուղղափառ Եկեղեցու, Հնդիկ Մալաբար Եկեղեցու, Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պատրիարքության, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքության, Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու, Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու, Չեխիայի Ուղղափառ Եկեղեցու, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու, Հույն Կաթոլիկ Եկեղեցու, Ասորի Կաթոլիկ Եկեղեցու, Հայ Կաթողիկե Եկեղեցու, Անգլիկան Եկեղեցու, Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու, Սան Էջիդիո համայնքի եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակներն ու ներկայացուցիչները:

Արարողությունն սկսվեց երեկոյան ժամը 17:00-ին: Տերունական աղոթքից հետո հայրապետական հանդիսավոր թափորը Մայր տաճարի Իջման ս. Սեղանի առջեւից շարժվեց դեպի Մայր Աթոռի՝ Ս. Տրդատ արքայի անունը կրող Բաց խորան: «Խորհուրդ խորին» եւ «Ուրախ լեր» շարականների երգեցողության եւ Մայր տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո, խաչերի եւ խաչվառների առաջնորդությամբ, ուխտավորների ծափողջույնների ուղեկցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը, օրհնելով ներկա ժողովրդին, ամպհովանու ներքո ուղեկցվեց դեպի Բաց խորան:

Վեհափառ Հայրապետի ընթերականերն էին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանը եւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ներկայացուցիչ Մուշեղ արք. Մարտիրոսյանը:

Շարունակությունը՝ էջ 2

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻ՛Ն Բ ԱՄԵ՛ՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՐԲԱԼՈՅՍ ՄՅՈՒՌՈ՛ՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱ՛Ն ԱՌԻԹՈՎ

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

«Զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւղս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր..., սրբութիւն հոգւոց եւ մարմնոց..., կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նախատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին» (աղոթք սուրբ Մյուռոնի օրհնության):



*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,*

*Ողորմած Աստծո նախախնամությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման տարում Մյուռոնի օրհնությամբ հոգեւոր մի նոր ուրախություն է հեղվում մեր կյանքին: Տոնական մեծ օր է: Վարագա Սուրբ Խաչի տոնն է՝ նվիրական հիշատակը Հայաստան բերված տերունական Խաչափայտի մասունքի հրաշքով հայտնվելու: Այս մեծասքանչ օրը հոգեւոր անհուն ուրախության զգացումներով համայն հայոց հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք սրբալույս Մյուռոնի օրհնությունը:*

*Մեր աղոթքը բարձրացրեցինք առ երկնավոր մեր Հայրը, որ Իր Սուրբ Հոգու շնորհով նյութեղեն այս յուղը վերափոխվի սրբության ու շնորհաբաշխ զորության: Մեր հայրերի օրհնության աղոթքով խնդրեցինք, որ «լինի յուղ ցնծության, զգեստ լուսավոր..., սրբություն հոգիների եւ մարմինների... կնիք արդարության, զենք հավատքի, հաղթող նախատակ ընդդեմ ամենայն գործոց բանսարկուի»: Խնդրեցինք, որ նրա սրբարար օծումով շարունակվի աստվածային պարգեւների հեղումը հավատացյալների հոգիներին, հայոց մեր աշխարհին, համայն մեր ժողովրդի կյանքին:*



*Սրբալույս Մյուռոնը տեսանելի նշանն է Քրիստոսով օծման, որն ընդունում ենք մկրտության միջոցով՝ իբրեւ ժառանգակից Փրկչի: Մյուռոնով զգեստավորվում ենք Քրիստոսի սրբությամբ, մաքրվում մեղքից, որպեսզի ապրենք Աստծո արդարությամբ: Մյուռոնը զարթոնք եւ զարուն է հոգիների, ծաղկում՝ հավատքի, առաքինասեր կյանքի ու բարեպաշտ գործերի, վահան՝ ընդդեմ չարի, հաղթանակը, փառքն ու լուսեպսակը հավատացյալների, քանզի երկնավոր մեր Հայրն Իր Որդու միջոցով կոչեց մեզ մահվանից կյանքի, մեղքին ծառայությունից շնորհների ազատության եւ երկնային արքայության ժառանգության:*

Շարունակությունը՝ էջ 2

# Օրհնվեց 21-րդ դարի երրորդ Մյուռոնը եւ կոչվեց «Հաղթության Մյուռոն»

Սկիզբը՝ էջ 1

Հայրապետական թափորի մեջ տարվում էին Մյուռոնօրհնության արարողության ժամանակ գործածվող սրբազան մասունքները, Սկեւռայի մասանց պահարանի կրկնօրինակը եւ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների մասանց պահարանը, սրբալույս Մյուռոնի նյութերը եւ այլ սրբություններ: Կոստանդնուպոլսի հայոց պատրիար-



քական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը կրում էր Կենաց Փայտի մասունքով խաչը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը՝ սբ Գեղարդը, ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը կրում էր սբ Գրիգոր Լուսավորչի Աջը, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը՝ Ծաղկանց նյութի սափորը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը՝ Բալասանի սափորը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ



արք. Չուլջյանը՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցից այս առիթով դուրս բերված Վեհափառի Ավետարանը, Փառեն արք. Ավետիքյանը՝ Ս. Անդրեաս առաքյալի մասունքով Աջը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը՝ սբ Ղուկաս ավետարանչի մասունքով Աջը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը՝ հին Մյուռոնով մյուռոնաթաթափ մեծ աղավնին, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Մովսես եպս Մովսիսյանը կրում էր սբ Թադեոս առաքյալի մասունքով Աջը:

Զույգ բուրվառակիրներ Նարեկ վրդ. Ավագյանի եւ Ռուբեն աբղ. Զարգարյանի առջեւից եկեղեցական շապիկով քայլում էր սուրբ Մյուռոնի կնքահայրը՝ Մայր Աթոռի բարերար տիար Հայկ Տիտիզյանը:

Մայր տաճարի երգչախումբը «Հրաշափառ» շարականի հանդիսավոր կատարումով Բաց խորանի մատույցներում դիմավորեց հայրապետական թափորին, ապա միասնական՝ Տերունական աղոթքով սկսվեց Մյուռոնօրհնության խորհրդավոր արարողությունը:

Սկզբում «Որ զշնորհս» շարականի երգեցողության ներքո բուրվառակիրները խնկարկեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած եպիսկոպոսաց դասին եւ սրբալույս Մյուռոնի կաթսան, ապա Հին ու Նոր Կտակարաններից հատվածներ եւ սբ Մյուռոնին նվիրված աղոթքներ ընթերցվեցին:

Ավետարանից հետո հնչեց «Բաց մեզ, Տէր» շարականը, որի ժամանակ խորան հրավիրվեց Մյուռոնի կնքահայր տիար Հայկ Տիտիզյանը, ով Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի հետ միասին բացեց սբ Մյուռոնի կաթսան:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մյուռոնի կաթսայի մեջ հեղեց ծաղկանց նյութը եւ բալասանը, որից հետո, ձեռամբ Նորին Սրբության, կաթսայի մեջ լցվեց նաեւ Անթիլիասում օրհնված նոր Մյուռոնը, որ Վեհափառ Հայրապետին էր մատուցել Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ներկայացուցիչ Շահան արք. Սարգիսյանը:

Սրբազան ավանդության համաձայն՝ «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգակցության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեռոնաթափ աղավնիով կաթսայի մեջ հեղեց նաեւ հին Մյուռոնը՝ նորին փոխանցելով սբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով օրհնված սրբալույս Մյուռոնի զորությունը:

Նորին Սրբությունն օրհնեց նոր Մյուռոնը, տյառնագրեց եւ խառնեց նաեւ Կենաց Փայտի մասունքով խաչով, աստվածամուխ սբ Գեղարդով եւ հայոց հավատքի հայր սբ Գրիգոր Լուսավորչի Աջով:

Այնուհետեւ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր պատգամն ուղղեց ներկաներին եւ համայն հայությանը, որից հետո «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի ներքո Նորին Սրբությունը, եպիսկոպոսաց դասը եւ Մյուռոնօրհնության կնքահայրը համբուրեցին նորօրհնյալ Մյուռոնի կաթսան:

Արարողությունը փակվեց Տերունական աղոթքով, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սբ Գեղարդով օրհնեց ներկաներին:

Ուխտավոր ժողովրդին եւ Քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչներին հնարավորություն տրվեց հպվելու սբ Մյուռոնի կաթսային եւ ստանալու նոր Մյուռոնի օրհնությունը:

Մյուռոնօրհնության արարողության ավարտին թափորը հայրապետական մաղթերգի ներքո ուղղվեց դեպի Մայր տաճար:

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՐԲԱԼՈՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

*Սկիզբը՝ էջ 1*

*Աստծո ողորմությամբ այսօր աշխարհի բոլոր կողմերից ազգիս զավակները ուխտավորաբար համախմբվել են Սուրբ Էջմիածնում՝ աղոթակից լինելու սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը: Մեր ժողովրդի հազարավոր զավակների ներկայությունն այստեղ վկայում է մեր կյանքում կարեւորությունն ու արժեքը սուրբ Մյուռոնի, որ կնիքն է քրիստոնեական մեր ինքնության ու շաղախը՝ ազգային մեր միասնականության: Մյուռոնում տեսնում ենք նաեւ մեր ժողովրդի հանդեպ Աստծո հոգածությունն ու խնամքը, Ով Իր փրկության շնորհը տարածեց Արարատի շուրջ սփռված հայոց մեր երկրի ու ազգի վրա: Մյուռոնի մեջ տեսնում ենք Սուրբ լեռն Արարատ, որի վրա հանգրվանեց Նոյ նահապետի փրկության տապանը, եւ աղավնու բերած ձիթենու շյուղը դարձավ խորհրդանիշը Աստծո խաղաղության, իսկ ձիթենու յուղը՝ օրհնյալ նյութը սուրբ Մյուռոնի: Մյուռոնի ամեն կաթիլում տեսնում ենք սուրբ Թադեոս առաքյալի ձեռքով Հայաստան բերված մեր Տիրոջ օծության յուղը: Տեսնում ենք սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ձեռամբ Արածանիի՝ Արեւելյան Եփրատի ջրերում, երկնքում ծագած տերունական խաչի լուսեղեն նշանի ներքո մկրտությունը հայոց Տրդատ արքայի, արքունիքի ու ժողովրդի: Մյուռոնում պատկերն է տերունաշնորհ Սուրբ Էջմիածնի, պատկերները՝ մյուռոնաօծ մեր վանքերի ու եկեղեցիների, խաչքարերի ու մագաղաթների, պատկերները՝ իրենց կյանքով Մյուռոնի լույսը տարածած մեր սրբերի: Մյուռոնը միախառնում է մեր անցյալն ու ներկան, այո՛, հավատում ենք, եւ գալիք բոլոր դարերը, քանզի բոլոր փորձությունների հանդիման մեր ժողովուրդը անխախտ պահեց Մյուռոնի դրոշմը՝ աներկբա վստահությամբ, որ այն «յուղ է ցնծության, զգեստ լուսավոր..., սրբություն հոգիների եւ մարմինների... կնիք արդարության, զենք հավատքի, հաղթող նահատակ ընդդեմ ամենայն գործոց բանսարկուի»:*



*Սուրբ Մյուռոնն իր հոգեղեն զորությամբ հավատքի զենք եղավ նաեւ 100 տարի առաջ Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած մեր ժողովրդի զավակների համար, ովքեր հաղթող նահատակներ եղան՝ պահելով իրենց հավատարմությունն առ Աստված ու առ հայրենին: Եղեռնահար մեր ժողովուրդը մյուռոնադրոշմ հավատքով վերապրեց Ցեղասպանությունը, հաղթեց մահին: 100-ամյա մեր ուղին եղավ վերածննդի ուղի, եւ այսօր մեր անկախ պետականության հովանու ներքո ազգային զարթոնքի նոր հորիզոններ են լուսավորվում: Մեր նորօրհնյալ կյանքի հուսալերությամբ նորաեփ այս Մյուռոնը՝ օրհնված Ցեղասպանության 100-րդ տարելիցի նվիրական տարում, նաեւ՝ մեր սրբացյալ նահատակների բարեխոսության հայցով, կոչում ենք ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՌՈՆ՝ հավատով, որ այն հավատացյալների հոգիներին դրոշմելու է մեր սուրբ նահատակների, Տիրոջ բոլոր վկաների եւ հայրենյաց պաշտպան մեր նախնյաց հոգու արիությունն ու անպարտ ոգին:*

*Սիրելինե՛ր, արժեւորենք մեր Մյուռոնը որպես Մյուռոն սրբացյալ կյանքի, Մյուռոն վերազարթոնքի, որպեսզի հոգեւոր նորոգությամբ, մեր արդար կյանքով ու ողորմած գործերով շարունակենք վերելքի մեր ուղին: Արժեւորենք մեր Մյուռոնն իբրեւ շաղախ ազգային միասնականության, որպեսզի կարող լինենք հաղթահարել մեր կյանքի դժվարությունները, փարատել հոգսերն ու նեղությունները: Այսօր, երբ աշխարհը լի է տագնապներով, մարդկային կյանքեր խլող հակամարտություններով՝ հատկապես Մերձավոր Արեւելքում, ուր անասելի տառապանք եւ կորուստներ են կրում նաեւ մեր ժողովրդի զավակները, երբ խաթարված է անդորրը մեր հայրենիքի սահմաններում, եւ տակավին արդար վճիռ չի ստացել մեր ժողովրդի իրավունքների ճանաչումը, հրամայական է ամուր միասնականությամբ զորացնել մեր հայրենիքը, որ լինի ապավենը համայն մեր ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի, մեր արդար դատի հաղթանակի եւ ոգեշնչող ուժը՝ ազգային զարթոնքի:*

*Սուրբ Էջմիածնից բաշխվող սրբալույս Մյուռոնը թող տարածի սրբությունը եւ հոգեւոր առաքինությունների անուշաբույրը աշխարհում եւ հանուր մեր ժողովրդի կյանքում, ազգային-եկեղեցական մեր օրհնյալ անդաստաններում, հայ ընտանիքներում, մեր հայրենիքի սահմաններում, հայրենյաց պաշտպան մեր զինվորների, մեր Եկեղեցու բոլոր զավակների սրտերում՝ դառնալով հաղթանակների եւ բարի գործոց նոր ձեռքբերումների զորություն: Երանաշնորհ մեր Հայրապետներից Սիմեոն Երեւանցին Էջմիածնից սփռվող Մյուռոնի մասին ասում է. «Ինչպես արեգակի ճառագայթն է ծանուցում արեգակի գեղեցկությունն ու օգտակարությունը, ինչի շնորհիվ կառավարվում է երկիրը եւ դալար մնում, ճիշտ այդպես էլ սուրբ Մյուռոնն է միշտ քարոզում Սուրբ Էջմիածնի օգտակարությունն ու գեղեցկությունը: Ահա խորհրդավոր արեգակ Սուրբ Էջմիածինը, որ լուսավորում է ձեր հոգիներն ու մարմինները»: Թող Սուրբ Էջմիածնի Մյուռոնի հավերժական լույսը միշտ դրոշմվի մեր ժողովրդի զավակաց հոգիներին, որպեսզի մշտապես նորոգեն իրենց ուխտը առ Աստված, ուխտը՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու նվիրական հայրենիքը: Թող աղավնու բերած ձիթենու շյուղով Արարատի փեշերից ազդարարված Աստծո խաղաղությունը ամրացնի արդարության, մարդասիրության ոգին աշխարհում, զորացնի համերաշխությունը եւ համագործակցությունը մարդկանց եւ ազգերի:*

*Այս օրհնաբեր եւ հոգենորոգ օրը Մենք գոհություն ենք վերառաքում առ Ամենակալն Աստված, որ Մեզ վերստին շնորհը պարգեւեց կատարելու Մյուռոնօրհնության սրբազան արարողությունը՝ մասնակցությամբ եւ աղոթակցությամբ Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին ներկայացնող գերաշնորհ Տ. Մուշեղ եւ Շահան արքեպիսկոպոսների, Երուսաղեմի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Նուրհան արք. Մանուկյանի, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Տ. Արամ արք. Աթեշյանի, քույր Եկեղեցիների գերապատիվ Հովվապետերի եւ բարձրապատիվ ներկայացուցիչների, ուխտապահ մեր հոգեւոր դասի, հայոց պետական ավագանու, դիվանագիտական առաքելությունների ղեկավարների եւ ներկայացուցիչների եւ հայրենաբնակ ու Սփյուռքից ժամանած մեր ժողովրդի բազում բարեպաշտ զավակների: Հոգու բերկրությամբ եղբայրական Մեր ողջույնն ենք հղում Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանին եւ քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ աղոթքով ու մաղթանքով, որ Տերը միշտ անսասան ու պայծառ պահի Իր Սուրբ Եկեղեցին Ավետարանի կենարար պատգամներով մարդկության կյանքը լուսավորելու եւ փրկության առաջնորդելու առաքելության մեջ:*

*Աղոթում ենք, որ Ամենակալ Տերը խաղաղություն ու ապահովություն պարգեւի աշխարհին եւ Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկրին: Եվ թող Տիրոջ Սուրբ Հոգու շնորհներով առատապես օրհնվի մեր ժողովրդի եւ համայն մարդկության կյանքը:*

*«Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:*





# Սբ Էջմիածնի Մայր տաճարում կատարվեց Էկումենիկ աղոթք

Սեպտեմբերի 26-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցավ Էկումենիկ աղոթքի արարողություն, որին մասնակցում էին Մյուռոնօրհնեքի առիթով Մայր Աթոռ ժամանած Քրիստոնեական Եկեղեցիների եւ կազմակերպությունների 39 հոգեւոր պետ ու ներկայացուցիչ:

Նորին Սրբություն Գարեգին Բ Հայրապետը եւ Նորին Ամենապատվություն Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Թեոդորոս Բ-ն, «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո, հոգեւորականաց թափորով մուտք գործեցին Մայր տաճար, որտեղ՝ ավագ ս. Խորանի առջեւ, Քրիստոսի Ս. Եկեղեցու պայծառության եւ անսասանության համար տեղի ունեցավ միասնական աղոթասացություն:

Մինչ Էկումենիկ աղոթքի սկիզբը, խոսք ասաց ԱՄՆ Արեւելյան հայոց թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Վիգեն արք. Այքազյանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից միջեկեղեցական հյուրերին ողջունելով համայն հայության հոգեւոր կենտրոնում՝ Վիգեն սրբազանն ի մասնավորի նշեց. *«Մենք շրջապատված ենք մեծ թվով պատվարժան հոգեւոր առաջնորդներով, ինչի արդյունքում մեզ միայնակ չենք զգում: Դուք այստեղ եք մեր ուրախ եւ տխուր օրերին: Ինչպես գիտեք, մենք հինգ ամիս առաջ ոգեկոչում էինք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Հայ ժողովրդի համար այդ տխուր օրերին դուք այստեղ՝ մեզ հետ էիք, կիսում էիք մեր ցավը, մեր տխրությունը, մեր պատմության եւ ժողովրդի դժվարին պահերը: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ամենքիդ, որ վերստին եկել եք կիսելու մեր ուրախությունը եւ այս շատ կարեւոր իրադարձության մասնակիցը դառնալու»*:

Տերունական աղոթքից հետո Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ընթերցվեց «Առ դրանն Սրբոյ Եկեղեցւոյ» աղոթքը: Ապա քարոզներ եւ աղոթքներ ասացին Հնդիկ Մալաբար Եկեղեցու ներկայացուցիչ Մումբայի Միտրոպոլիտ Նորին Ամենապատվություն Գեւարգիհես Մար Կուրիլոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի ներկայացուցիչ, Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրին:

Հնդիկ Մալաբար Եկեղեցու ներկայացուցիչ Նորին Ամենապատվություն Միտրոպոլիտ Աբրահամ Մար Սերաֆիմի կողմից ընթերցվեց առաքելական թուղթը, որից հետո Ասորի Ուղղափառ եկեղեցու Բեյրութի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Մոր Կլեմես Դանիել Խուռին ընթերցեց Մատթեոսի Ավետարանից քաղված մի հատված:

Նույն օրը, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Էկումենիկ հանդիպում, որին մասնակցում էին Մայր Աթոռում գտնվող Քրիստոնեական Եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ին ներկայացնող Մուշեղ արք. Մարտիրոսյանը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ եւ Նվիրապետական Աթոռների միաբաններ:

Քրիստոնեական Եկեղեցիներից եւ կազմակերպություններից էկումենիկ հանդիպմանը ներկա էին Ղպտի Ուղղափառ Եկեղեցու, Ասորի Ուղղափառ Եկեղեցու, Հնդիկ Մալաբար Եկեղեցու, Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պատրիարքության, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքության, Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու, Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու, Չեխիայի Ուղղափառ Եկեղեցու, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու, Հույն Կաթոլիկ Եկեղեցու, Ասորի Կաթոլիկ Եկեղեցու, Հայ Կաթողիկե Եկեղեցու, Անգլիկան Եկեղեցու, Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու, Սան Էջիդիո համայնքի եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակություններն ու ներկայացուցիչները:

Հանդիպումն սկսվեց Նորին Ամենապատվություն Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Թեոդորոս Բ-ի աղոթքով, ապա ներկաներին բարիգալստյան խոսք ասաց հանդիպման համակարգող, ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը: Սրբազան հայրն իր խոսքում անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ հայ ժողովրդի կյանքում սրբալույս Մյուռոնի օրհնության կարեւորությանը, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության ոգեկոչման 100-րդ տարում Քրիստոնեական Եկեղեցիների՝ հայ ժողովրդին ցուցաբերած զորակցությանը:

Այնուհետեւ աշխարհի տարբեր կողմերից Մայր Աթոռում համախմբված եկեղեցականներին իր հայրապետական ողջույնը փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*«Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ ի Քրիստոս,*

*Մեզ համար մեծ գոհունակություն է ողջունել Ձեզ ամենքիդ՝ քույր Եկեղեցիների Հովվապետերին եւ ներկայացուցիչներին, մեր Եկեղեցու առաջնորդներին՝ համայն հայության հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: Սրբալույս Մյուռոնի օրհնության համազգային մեծ տոնին ձեր աղոթակցությունը զորակցությունն է մեր Սբ Եկեղեցուն եւ քրիստոսասեր մեր ժողովրդին, որ առ Բարձրյալն Աստված գոհաբանական իր աղոթքն է երկինք բարձրացնում սաղմոսերգուի խոսքերով. «Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սղմ. ՃԼԲ 1): Այս հոգեպարար առիթով ի Քրիստոս մեր եղբայրական ջերմ սերն ու բարեմաղթանքներն ենք հղում Քրիստոնեական Եկեղեցիների մեծ ընտանիքի բոլոր Հովվապետերին՝ աղոթելով Քրիստոսի Սբ Եկեղեցու հավետ պայծառության համար:*

*Սիրելինե՛ր, Հայաստանյայց Սբ Եկեղեցին, իբրեւ Քրիստոսի ընդհանրական ու խորհրդավոր մարմնի մի անդամ, վաղը եւս մեկ անգամ կատարելու է քրիստոնեական մեր հավատքի մեծագույն խորհուրդներից մեկը՝ օրհնելու է սրբալույս Մյուռոնը: Իբրեւ Հայաստանյայց Եկեղեցու միասնականության ու անբաժանելիության խորհրդանիշ՝ սրբալույս Մյուռոնն օրհնվելուց հետո տարածվելու է աշխարհի բոլոր կողմերում, ուր մասնավորապես Հայոց ցեղասպանության հետեւանքով տարագրության ճանապարհը բռնած մեր ժողովուրդը, անդորր ափերի փնտրտուքով, հանգրվան է գտել եւ հաճախ աղոթել ու իր հոգու սնունդը ստացել արդեն իր երկրորդ հայրենիքը դարձած երկրի քրիստոնյա իր եղբայրների ու քույրերի հետ՝ անսասան պահելով իր հավատքն ու իր քրիստոնեական ինքնությունը՝ իբրեւ Հայաստանյայց Եկեղեցու հավատարիմ զավակ: Հայոց Եկեղեցին այդ դառն ու դժնդակ տարիներին ապավինել է Քրիստոսի միասնական ու խորհրդական մարմնի անսպառ ուժին ու զորությանը:*

*Այս նվիրական օրերին էլ Մենք աղոթում ենք մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի հետ, որպեսզի Սբ Հոգու շնորհները, անսպառաբար հեղվելով սրբալույս Մյուռոնի մեջ, զարդարեն ամենքիս քրիստոնեական հավատի ու առաքինությանց նվիրական շնորհներով: Աշխարհում մարդկային կյանքի, աստվածատուր պատվիրանների ու քրիստոնեական արժեքների պահպանման դժվարին ճանապարհին այսօր, առավել քան երբեւէ, անհրաժեշտ է մի նոր Հոգեգալուստ, սրբազան առաքյալների օրինակով՝ համախմբման մի նոր Վերնատուն: Մենք գոհունակություն եւ փառք ենք տալիս Աստծուն, որ ներկա դարաշրջանում քրիստոնյաները գիտակցում եւ խոր ըմբռնումով են ընկալում քրիստոնեական եղբայրության եւ փոխադարձ սիրո աստվածատուր պատվիրանը:*

*Սրբալույս Մյուռոնի օրհնությունը եւս մի առիթ ու օրինակ է, որով թանձրացյալ կերպով արտահայտվում է Ձեր եղբայրական սերը հանդեպ հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին: Ցեղասպանության հարյուրամյակի հիշատակությանց շարքի մեջ սրբալույս Մյուռոնի օրհնությունը կարեւորագույն նշանակություն ունի. այն հիշեցնում է մեզ հոգեւոր վերածննդի անհրաժեշտության մասին: Վերածնունդ, որտեղ խառնվում եւ միավորվում են մեր հայրերից եկող սրբազան ավանդությունն ու նոր սերունդների քրիստոնեական հավատքի տեսլականը, Եկեղեցու պատմության փառավոր էջերն ու ապագայի քրիստոնեական առաքելության ճանապարհը՝ ի փառս Քրիստոսի Սբ Եկեղեցու:*

*Հիրավի, չկա ավելի մեծ ու իրական, շոշափելի իրողություն, քան տարբեր եկեղեցական ավանդությանց կրողների միասնական աղոթքն ու համախմբումը Տիրոջ սբ Սեղանի շուրջ: Մեր աղոթքն է առ Ամենաբարձրյալն Աստված, որ Տերը զորացնի Իր Սբ Եկեղեցին, պարգեւի մեզ ճանաչելու սիրո եւ միության ճշմարիտ ոգին, ինչպես որ իր խաչելությունից առաջ Նա պատգամեց մեզ. «Որպէս սիրեաց զիս Հայր, եւ Ես սիրեցի ձեզ. հաստատուն կացէք ի սէր Իմ» (Հովհ. ԺԵ 10):*

*Շարունակությունը՝ էջ 4*





# Վարագա Ս. Խաչի տոնի առիթով Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ





Սեպտեմբերի 27-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշում է Վարագա Սուրբ Խաչի տոնը:

Տոնի կապակցությամբ, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Պատարագին ներկա էին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանը, թեմակալ առաջնորդներ, քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչներ եւ պատվիրակություններ, Մայր Աթոռի բարերարներ, Մյուռոնօրհնության առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանած բազմաթիվ ուխտավորներ:

Իր քարոզում Վարդան սրբազանն անդրադարձավ տոնի պատմությանը եւ խորհրդին՝ մասնավորաբար նշելով. «*Այսօրվա տոնի պատգամը մեզ սովորեցնում է աղոթքի հարատեւության, անկեղծ աղոթքի եւ այդ աղոթքի մեջ նպատակ դնելու, մեր անձերի փրկությունը փափագելու մասին: Մենք հաճախ մեր առօրյա աղոթքներից տրտնջում ենք, երբ Աստված ուշացնում է մեր փափագների կատարումը: Սակայն մեր անձերի փրկությունը Տիրոջ շնորհն է՝ Աստծու պարգեւը: Տեր Հիսուս խաչվեց մեր փրկության համար, քանի որ Աստված այդ կամեցավ, քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց, եւ մենք սերը Նրանով ճանաչեցինք… Քրիստոսն Իր կյանքը զոհեց մեզ համար: Ե՞րբ է զոհողություն տեղի ունենում. երբ սեր կա… Ե՞րբ կարող է ընտանիքում զոհողություն երեւալ. երբ սեր կա… Ե՞րբ կարող է անհատը կամ զինվորն իր անձը զոհել հայրենիքի համար. երբ սեր լինի… Ե՞րբ Տիրոջ վկայության համար նահատակներ եղան. երբ մեր քրիստոնյա նախնիները հավատքի մեջ սիրով գործեցին ու ապրեցին: Հետեւաբար Տիրոջ խաչի խորհուրդն է, որ երկինքն ու երկիրը միացնելով՝ կարելի է դարձնում Աստծու եւ մարդու հանդիպումը*»:



Սրբազան հայրը խոսեց նաեւ հայ ժողովրդի համար այս նվիրական տարվա եւ հատկապես 21-րդ դարում թվով երրորդ Մյուռոնօրհնության անցկացման կարեւորության մասին՝ հավելելով. «*Ամենքս պատմությամբ հարուստ օրեր ենք ապրում: Այդ նույն Վարագա լեռների տարածքներից հայրենազրկված մեր ժողովուրդը ոգեկոչում է մեր ժողովրդի պատմության, խաչելության էջերից մեկի՝ Հայոց ցեղասանության 100-րդ տարելիցը: Սակայն, մենք, ի վկայություն մեր ժողովրդի աղոթքի հարատեւության, ի տես մեր տառապյալ հայորդյաց հարութենական հավատքի, կամքի ուժականություն վերագտանք՝ վերակերտելու ազատ ապրելու եւ արարելու մեր անմեռ իրավունքը: Մեր ժողովուրդը շարունակաբար ապացուցեց, որ խաչի անունը սեր է, իսկ սիրո անունը՝ Հարություն եւ վերածնունդ: Եկե՛ք, ուրեմն, նույն տոկունությամբ, հավատքի նույն զորությամբ, աղոթքի մեջ անցկացնենք այս պատրաստության ժամերը, որպեսզի Հայոց Հայրապետի երրորդ եւ պատմական Մյուռոնօրհնության այս արարողությունը Տիրոջ Սբ Հոգու եւ առատաբուխ շնորհների հեղումը լինի մեր հայրենիքի, Եկեղեցու եւ ժողովրդի վրա: Եկե՛ք աղոթենք, որ մեր սրբացած նահատակների բարեխոսությամբ եւ բարի հայացքի ներքո Տերը մեզ այդ շնորհն առատորեն պարգեւի, եւ երկինքն ու երկիրը միավորող սուրբ խաչի նշանով սրբալույս Մյուռոնի սրբացնող ուժը՝ իբրեւ կնիք հայության եւ դրոշմ երկնավոր անապական պարգեւների, տարածվի մեր աղոթքի բոլոր տների վրա, ինչպես նաեւ՝ սբ Խորանի սպասավորների ու հավատացյալների կյանքում*»:

Պատարագի ավարտին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մյուռոնի կաթսայի առջեւ ասաց նաեւ ձիթայուղի օրհնության վերջին աղոթքը:

Ավելի ուշ սրբալույս Մյուռոնի կաթսան տեղափոխվեց Ս. Տրդատի բաց խորան, որտեղ էլ տեղի ունեցավ Մյուռոնօրհնության սրբազան արարողությունը:

# Սբ Էջմիածնի Մայր տաճարում կատարվեց Էկումենիկ աղոթք

*Սկիզբը՝ էջ 3*

*Թող մեր Տիրոջ սերն ու շնորհը լինեն ամենքիս հետ, թող Սբ Հոգի Աստված Իր առատաբուխ շնորհներով օրհնի ամենքիս՝ կատարելու Նրա ամենասուրբ կամքը՝ ի փառս Սբ Երրորդության եւ ի շինություն Քրիստոսի Սբ Եկեղեցու. ամեն*»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքի՝ ողջույնի խոսքերով հանդես եկան Նորին Ամենապատվություն Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Թեոդորոս Բ-ն, Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց Հյուսիսային Սինայի եպիսկոպոս Նորին Սրբազնություն Կոզման, Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի անունից Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրին, Ասորի Ուղղափառ Եկեղեցուց Բեյրութի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Մոր Կլեմես Դանիել Խուռին, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի ներկայացուցիչ, Տամբովի եւ Ռասկազովսկու Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Թեոդոսիոսը, Ռումին Ուղղափառ Եկեղեցուց Տրանսիլվանիայի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Լավրենտիոս Ստրեզան, Հնդիկ Մալաբար Եկեղեցուց Մումբայի Միտրոպոլիտ Նորին Ամենապատվություն Գեւարգիես Մար Կուրիլոսը, Մելքիթ Կաթոլիկ Եկեղեցու պետ, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Ամենապատվություն Գրեգորիոս Գ Լահհամը, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարքի՝ Նորին Ամենապատվություն Մորան Մոր Բեչարա Բուտրոս ալ Ռաhի պաշտոնական ներկայացուցիչ Նորին Սրբազնություն Պաուլ արք. Սայան, Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցուց Ֆինլանդիայի եւ Տուրկուի արք. Վերապատվելի Կարի Մակինենը եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչ Վերապատվելի Դանիել Բուդան:

Էկումենիկ հանդիպումը եզրափակվեց կարդինալ Լեոնարդո Սանդրիի աղոթքով:

Աղոթքներ մատուցեցին նաեւ Մելքիթ Կաթոլիկ Եկեղեցու պետ, Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Ամենապատվություն Գրեգորիոս Գ Լահհամը, Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս Վերապատվելի Կարի Մակինենը (Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցի) եւ Նորին Ամենապատվություն Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Թեոդորոս Բ-ն:

Էկումենիկ աղոթքի արարողությունն ամփոփվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Պահպանիչ աղոթքով:

# Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում



Սեպտեմբերի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ սրբալույս Մյուռոնի օրհնության արարողության առիթով Հայաստան ժամանած Քրիստոնեական Եկեղեցիների պետերի ու ներկայացուցիչների, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների, Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդների եւ բարերար հայորդիների, այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Մյուռոնօրհնության մասնակիցների անունից Մեծ եղեռնի հուշարձանի առջեւ ծաղկեպսակ զետեղվեց, ապա նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Արարողության սկզբում աղոթք կատարեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի ներկայացուցիչ, Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրին՝ Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի եւ համայն աշխարհում խաղաղության համար հայցելով հայոց նահատակների բարեխոսությունը:

«*Դո՛ւք՝ սրբերդ, նահատակներդ Հայոց ցեղասպանության, այս առավոտ ցանկանում եմ խոսել ձեզ հետ, ցանկանում եմ ասել, որ դուք Աստծու բարեկամներն եք, դուք հավիտենական կյանքում եք, ձեր արյունը ձեր կյանքի սուրբ Մյուռոնն էր: Եվ այժմ ցանկանում եմ խոսել ձեզ հետ՝ բարեխոսե՛ք մեզ համար, աղոթե՛ք Աստծուն Հայաստանի, Հայոց Եկեղեցու, Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, եպիսկոպոսների եւ Հայաստանի բոլոր հավատացյալների, բոլոր քրիստոնյաների համար… Աղոթե՛ք այս երկրի համար: Բարեխոսե՛ք մեզ համար: Մենք աղոթում ենք նաեւ բոլորի, բայց հատկապես մեր եղբայրների ու քույրերի համար, ովքեր այժմ տառապում են պատերազմից, բռնությունից, ահաբեկչություններից: Եղբայրնե՛ր եւ քույրե՛ր, դուք, որ Աստծու ձեռքերում եք, բարեխոսե՛ք մեզ համար, խաղաղության շնորհի եւ Միջին Արեւելքում՝ հատկապես Սիրիայում, խաղաղության վերահաստատման համար… Մենք վստահություն ունենք ձեր նկատմամբ…*»,- իր սրտաբուխ աղոթքում ասաց կարդինալ Սանդրին:

Բարեխոսական աղոթքի ավարտին աղոթք ասաց նաեւ Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք Նորին Ամենապատվություն Թեոդորոս Բ-ն:

Արարողությունից հետո, ուղեկցությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի, հյուրերը շրջեցին թանգարան-ինստիտուտում:



# Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացվեց «Գարեգին Ա» կրթական կենտրոնը

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ նորակառույց «Գարեգին Ա» կրթական կենտրոնի բացումը:

Արարողությանը ներկա էին կենտրոնի բարերարներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյանները՝ ընտանիքի անդամների հետ, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի բարերարներ եւ այլ հյուրեր:

Այս առիթով, մինչեւ կենտրոնի բացումը, երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրմի առջեւ կատարվեց հոգեհանգստյան կարգ:



«Գարեգին Ա» կրթական կենտրոնի առջեւ հյուրերին ողջունեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը, ով վերջին տասնամյակում Մայր Աթոռի կրթական գործունեության ոլորտում գրանցված լավագույն ձեռքբերումներից մեկը դիտարկեց «Գարեգին Ա» կենտրոնի ստեղծումը.

*«Այս կենտրոնի ստեղծումը դարձյալ վկայում է, որ Մայր Աթոռը սրբորեն պահում է սեփական առաքելությանը բնորոշ ավանդույթները: Մայր Աթոռն իր դարավոր գոյության ընթացքում հավատն ու գիտությունը երբեք իրար հակառակ չի դիտել, այլ դիտել է որպես միմյանց փոխլրացնող, ամբողջացնող: Վեհափա՛ռ Տեր, Ձեր հովվապետության ընթացքում այն գաղափարն արմատավորեցիք, որ Հայոց Եկեղեցու բարեկարգումը հնարավոր է միայն հոգեւոր կրթությունը համապատասխան որակի բարձրացնելու միջոցով: Այս լույսի ներքո սույն կենտրոնի հիմնումը նաեւ գնահատանքի եւ հարգանքի տուրք է Ձեր նախորդի՝ Գարեգին Ա Կաթողիկոսի հիշատակին, մարդու, ում մտապատկերում հոգեւորականն ու գիտնականը նույն նպատակին են ծառայում»*:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը եւ բարերաներ Հայկ եւ Էլզա Տիտիզյանները կտրեցին «Գարեգին Ա» կրթական կենտրոնի մուտքի ժապավենը, որով պաշտոնապես ազդարարվեց կենտրոնի բացումը:

Կրթական կենտրոնի դահլիճում արարողության մասնակիցները դիտեցին Գարեգին Ա Հայրապետին նվիրված ֆիլմ, ապա հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի՝ կատարվեց նորաբաց կենտրոնի օրհնության կարգը:

Արարողության ավարտին Նորին Սրբությունն իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց ներկաներին:

*«Ուրախությամբ եւ սիրով ողջունում ենք ամենքիդ ներկայությունը հայոց հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: Հիրավի, պատմական օրեր ենք ապրում լուսավորչահիմն Մայր Աթոռում: Երեկ ամենախնամ Տիրոջ բարեսեր կամքով կատարեցինք սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը, եւ տակավին թարմ են հոգեպարար այն զգացումները, որ համակել էին ամենքիս սրտերը: Այսօր եւս տոնական նույն ոգին է թեւածում. առիթը մեր սիրելի բարերարներ տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Տիտիզյանների ազնիվ հանձնառությամբ կյանքի կոչվող «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կառույցն է, որի շինարարական աշխատանքները, կամոքն Աստծո, իրենց բարեհաջող ավարտին պիտի հասնեն առաջիկայում: Փառք ու բարեբանություն երկնավոր Տիրոջը, որ աստվածասեր մեր ժողովրդին պարգեւել է ազնվասիրտ բարերար զավակներ, ովքեր իրենց եռանդն ու կարողությունները սիրահոժար կերպով ծառայեցնում են ի բարօրություն մեր հայրենքի եւ ի պայծառություն Առաքելական մեր Սբ Եկեղեցու:*

*Երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի անունը կրող այս կենտրոնը մեր Եկեղեցու հոգեւոր-կրթական ասպարեզում կարեւոր առաքելություն է ստանձնելու: Կենտրոնի հարկից ներս իրենց գիտելիքները պիտի հարստացնեն եւ կատարելագործեն մեր Եկեղեցու հոգեւոր սպասավորները, ուսուցիչներն ու կրթության ոլորտի այլ ներկայացուցիչներ: Կրթական կենտրոնում նպաստավոր պայմաններ են ստեղծվելու նաեւ հայագիտական ու աստվածաբանական հարցերի շուրջ գիտաժողովներ կազմակերպելու համար:*

*Դարեր շարունակ հայ հոգեւորականն ու հայ ուսուցիչն են կրթել մեր ժողովրդին, կերտել նրա հոգեւոր-բարոյական նկարագիրը, որով ազգս ապրել է, ստեղծել հարուստ դպրություն ու մշակույթ, հաղթահարել փորձություններ եւ հավատով նայել գալիքին: Հոգելույս Գարեգին Ա Հայրապետն էլ՝ իբրեւ հոգեւորական եւ ուսուցիչ, իր գրական եւ աստվածաբանական ծավալուն ժառանգության մեջ մշտապես եղավ*



*մեր հավատքի, մեր լեզվի, մշակույթի, մեր հայրենիքի ջատագովն ու պաշտպանը:*

*«Գարեգին Ա» կրթական կենտրոնը մշտավառ է պահելու հիշատակը լուսահոգի Հայրապետի՝ նրա անձը եւ կյանքի անցած ուղին օրինակ ու խրախույս դարձնելով եւ ոգեշնչելով ու նոր լիցքեր հաղորդելով երիտասարդ հոգեւորականներին եւ ուսուցիչներին:*

*Սիրելի՛ Հայկ եւ Էլզա, կրթական այս կենտրոնի կառուցման աստվածահաճո նախաձեռնությունն իր մեջ խտացնում է հոգելույս Հայրապետի հանդեպ ունեցած Ձեր ազնիվ ու ջերմ*



*զգացումները, Ձեր մեծ սերն ու նվիրումը: Հիրավի, այդ բացառիկ զգացումների արգասիքն ու վկայություններն են Գարեգին Ա Հայրապետի հիշատակը հավերժացնող արժանավոր Ձեր գործերը: Երանաշնորհ Հայրապետի սրտում փայփայած ու կյանքի վերջին օրերին Ձեզ փոխանցած տեսլական իղձն է հայագիտության ու աստվածաբանության կենտրոնի կառուցումը, որն այսօր իրական դարձած՝ նպաստ է բերելու մեր ժողովրդի հոգեւոր, գիտակրթական ու մշակութային կյանքի առաջընթացին: Երջանկահիշատակ Հայոց Հայրապետի հանդեպ տածած ձեր խորին հարգանքի եւ նրա լուսավոր հիշատակի առջեւ խոնարհումի դրսեւորումն է նաեւ նրա գրական ժառանգության եւ անտիպ էջերի հրատարակության նախաձեռնությունը, որ տակավին շարունակում եք՝ նոր կյանք ու նոր շունչ տալով Գարեգին Ա Հայրապետի հոգեմտավոր ճառագայթումներին: Այս պահին, սիրելի՛ բարերարներ, հոգելույս Հայրապետը երկնքից օրհնում է Ձեզ եւ Ձեր աստվածահաճո բարի իրագործումները»*:

Նորին Սրբությունը վերստին իր բարձր գնահատանքը բերեց Տիտիզյան ընտանիքին՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ եւ ազգասեր ու եկեղեցաշեն գործոց հաջողություններ:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր օրհնությունը բերեց կառույցի ճարտարապետներ Արտավազդ Նազարեթյանին, Արամ Սահակյանին եւ շինարար Ստեփան Ախոյանին:

Վերջում Գարեգին Բ Հայրապետը մաղթեց, որ Գարեգին Ա լուսահոգի Հայրապետի սերմանած հունդերը շարունակեն նոր ծիլեր արձակել եւ առատ, բարի պտուղներ պարգեւեն մեր ժողովրդին, եւ օրհնյալ ճանապարհ ցանկացավ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի առաքելությանը:

# Մայր Աթոռ Ս. Էջմիածնում օծվեցին

## Դերջանի Ապարանից Ս. Դավիթ վանքի խաչքարերի նմանօրինակները



Սեպտեմբերի 28-ին, ի հիշատակ Հայոց ցեղասպանության սբ նահատակների, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանու ներքո օրեր առաջ կանգնեցված Դերջանի Ապարանից Ս. Դավիթ վանքի խաչքարերի նմանօրինակները:

Երկու խաչքարերը կանգնեցվել են Նորին Սրբության օրհնությամբ ու նախաձեռնությամբ եւ ազնիվ բարերարությամբ տեր եւ տիկին՝ Հակոբ եւ Դոննա Տիտիզյանների:

Խաչքարերի օծման հանդիսավոր արարողությունից առաջ խոսք ասաց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Մուշեղ սրբազանը, դիմելով ներկաներին, մասնավորաբար նշեց, որ օրը շատ հատկանշական ու խորհրդավոր է: Անդրադառնալով հայ ժողովրդի համար նվիրական 2015-ին՝ նա ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումով տարին արժեւորվեց հայ ժողովրդի համար, իսկ այս կապակցությամբ Մայր Աթոռում վեր խոյացած զույգ խաչքարերի օծումն առիթ է, որպեսզի նահատակության քաղցր լուծը ճաշակած սրբերի համար աղոթք եւ հայց ուղղվի երկինք: Սրբազանը հավելեց նաեւ, որ մեծագույն երջանկություն է տեսնել՝ ինչպես են ամենքը միասնաբար համատեղված՝ սրբություն խորհրդանշող խաչքարերի օծման աստվածային իրողության առջեւ:

Իր խոսքում Մուշեղ եպիսկոպոսը կարեւոր ձեռքբերում համարեց այն, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ պետք է Հաղթության սրբալույս Մյուռոնով առաջին անգամ օծվեն իրենց վիթխարի չափերով եւ հոգեւոր իմաստով այս երկու պանծալի խաչքարերը: *«Այս երկու խաչքարերը կանգնեցվել են այն հազարավոր խաչքարերի փոխարեն, որոնք այլեւս չկան, եւ այն բազմաթիվ հայորդիների փոխարեն, ովքեր*



*ծնկել են այդ խաչքարերի առջեւ եւ աղոթքներ վերառաքել Բարձրյալին»*,- շեշտեց սրբազան հայրը:

Այնուհետեւ ներկաներին դիմեց բարերար Հակոբ Տիտիզյանը: Նա վերհիշեց այն ուղին, որով անցել են այս երկու խաչքարերը: Տիար Տիտիզյանը երախտագետ սրտով շնորհակալություն հայտնեց նաեւ քանդակագործներին, ճարտարապետներին, որոնք շուրջ ինն ամիս տքնեցին, որպեսզի ստեղծվեին այս սրբությունները: Նա նաեւ վստահություն հայտնեց, որ խաչքարերի տեղադրումը պետք է գալիք սերունդներին պատմի հայ ժողովրդի փառավոր մշակույթի, Հայոց ցեղասպանության սբ նահատակների անմահ հիշատակի եւ հայոց ներկա վերածննդի մասին:

Այնուհետեւ տեր եւ տիկին Տիտիզյանների կողմից քողազերծվեցին երկնասլաց խաչքարերը: Ապա կատարվեց խաչքարերի օրհնության արարողությունը, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց իրենց կերտվածքով եզակի խաչքարերը:

Արարողության ավարտին տեղի ունեցավ նաեւ ընդունելություն, որի ժամանակ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր օրհնությունը բերեց Տիտիզյան ընտանիքի անդամներին:

Ամենայն Հայոց Հայրապետը տեր եւ տիկին՝ Հակոբ եւ Դոննա Տիտիզյաններին, ինչպես նաեւ Քրիս Տիտիզյանին եւ տիկնոջը, եկեղեցանվեր գործունեության համար շնորհեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշաններ:









# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ամենայն Հայոց

*23 սեպտեմբերի*

### Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարքին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Գրիգոր-Պետրոս Ի Կապրոյանին՝ ուղեկցությամբ Հայաստանում, Վրաստանում եւ Արեւելյան Եվրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանի: Սա նորընտիր Պատրիարքի առաջին այցելությունն էր Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքը բերեց Գրիգոր-Պետրոս Ի Պատրիարքին՝ ընտրության ու գահակալության առիթով՝ մաղթելով նրան արգասավոր ծառայություն:

Իր խոսքում Նորին Սրբությունը գնահատանքով ընդգծեց, որ վերջին տարիներին Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջեւ հարաբերությունները վերելք են ապրում եւ հատկանշված են սերտ համագործակցությամբ:

Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ հիշեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիկոս Պապի՝ ապրիլի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում մատուցված սրբազան Պատարագի արարողությունը եւ Պապի հնչեցրած ուղերձը՝ միտված մարդկության կյանքում նորանոր ոճիրների եւ ցեղասպանությունների կանխարգելմանը: Նորին Սրբությունը հաստատեց, որ համաշխարհային զարգացումների արդի պայմաններում Եկեղեցիներն արդարության ճանապարհ կարող են հարթել միմիայն համատեղ ջանքերով, փոխադարձ աջակցությամբ եւ աղոթքով:

Իր հերթին Հայ Կաթողիկե Պատրիարքը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր ընտրության առիթով հղված շնորհավորական ուղերձի եւ մաղթանքների համար: Զրույցի ընթացքում Գրիգոր-Պետրոս Ի Պատրիարքը նշեց, որ պետք է ջանա ուժերի ներածին չափով իր հոգեւոր փորձառությունը ծառայեցնել ի շահ իր հոտի, ինչպես նաեւ՝ զորացնել հարաբերությունները Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հետ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

### Մյուռոնօրհնության առիթով ժամանած բրազիլահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բրազիլիայի հայոց թեմի մի խումբ ուխտավորների՝ առաջնորդությամբ թեմակալ առաջնորդ Նարեկ եպս Բերբերյանի: Ուխտավորները Հայաստան են ժամանել իրենց մասնակցությունը բերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սեպտեմբերի 27-ին կայանալիք Մյուռոնօրհնության արարողությանը, ինչպես նաեւ՝ այցելելու Հայաստանի տարբեր սրբավայրեր:

Հանդիպման ընթացքում Գարեգին Բ Հայրապետը, անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում սրբալույս Մյուռոնի խորհրդին եւ նշանակությանը, ընդգծեց, որ Հայաստանի եւ Սփյուռքի թեմերից ուխտավորների մասնակցությունը Մյուռոնօրհնեքի արարողությանը ողջ հայ ժողովրդի միասնական աղոթքի խորհուրդ ունի: Վեհափառ Հայրապետը նշեց, որ ս. Մյուռոնն իր օրհնությունն ու շնորհները պիտի հեղի եւ հրաշագործի հայ ժողովրդի կյանքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում վերհիշեց նաեւ Բրազիլիա կատարած իր հովվապետական այցը՝ հավելելով, որ առիթ ունեցել է տեսնելու բրազիլահայ համայնքի նախանձախնդրությունն ու նվիրումը ազգային-հոգեւոր արժեքների եւ Եկեղեցու նկատմամբ:

Իր օրհնությունն ու գնահատանքը բերելով ներկաներին՝ Նորին Սրբությունը հորդորեց վառ պահել սերը Եկեղեցու եւ հայրենիքի հանդեպ, իրենց զավակներին կրթել ու դաստիարակել ազգային ինքնության բարձր գիտակցությամբ:

*24 սեպտեմբերի*

### Պոլսահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ուխտավորներին եւ հոգեւորականներին՝ առաջնորդությամբ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանի:

Ուխտավորների անունից շնորհակալության խոսք ասաց Արամ սրբազանը՝ նշելով, որ դարերի ընթացքում պոլսահայ համայնքի համար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հակառակ բոլոր տեսակի հանգամանքների, մշտապես եղել է հույսի, հավատքի եւ գոյատեւման աղբյուր, ուստի Կ. Պոլսի Պատրիարքության ներկայացուցիչները հաճախ են ուխտավորաբար այցելել համայն հայության հոգեւոր կենտրոն: Սրբազանն իր խոսքում նաեւ նշեց, որ պոլսահայ համայնքի անդամներն այս անգամ եւս չէին կարող անմասն մնալ եւ չմասնակցել Մյուռոնօրհնության օրհնաբեր արարողությանը:

Այնուհետեւ ուխտավորներին ողջունեց եւ իր հայրապետական օրհնությունը բերեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ ուրախություն հայտնելով տոնական այս օրերին պոլսահայերի՝ Մայր Աթոռ այցի եւ աղոթակցության համար: *«Մենք հպարտ ենք պոլսահայ մեր զավակներով»*,- իր խոսքում ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նշելով, որ մշտապես տեսել է պոլսահայ համայնքի զորավոր հավատքը եւ անվերապահ սերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի նկատմամբ:

Նորին Սրբությունը վերհիշեց նաեւ իր հովվապետական այցը Կոստանդնուպոլիս: Ամենայն Հայոց Հայրապետը փառք տվեց Աստծուն, որ հակառակ բոլոր տեսակի դժվարությունների եւ փորձությունների, տառապանքների եւ կորուստների, պոլսահայերը քաջարի կերպով ամուր են պահել իրենց հավատքը, ազգային ինքնության գիտակցությունը, ինչի վառ վկայությունն են Պատրիարքության հոգեւոր իշխանության ներքո գործող 42 եկեղեցիները, ինչպես նաեւ համայնքի կրթական, բարեսիրական հաստատությունները:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց պատրիարքական ընդհանուր փոխանորդին եւ հոգեւոր դասին՝ նվիրյալ եւ նախանձախնդիր ծառայության, ինչպես նաեւ Ս. Էջմիածին ուխտագնացությունը կազմակերպելու համար:

Նորին Սրբությունը նաեւ իր աղոթքն ու մաղթանքները փոխանցեց պոլսահայ համայնքին՝ հայցով, որ Աստծո օրհնության ներքո ապրեն խաղաղ եւ ապահով, պահպանեն հայրենի ժառանգությունը եւ ավելի շենացնեն պոլսահայ կյանքը:

*25 սեպտեմբերի*

### Բուլղարիայի հայոց թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի հայոց թեմի ուխտավորներին՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանի:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ողջունեց Մյուռոնօրհնության նվիրական այս օրերին բուլղարահայ ուխտավորների այցը Մայր Աթոռ: Նորին Սրբությունը նաեւ նոր առաջնորդի ընտրության կապակցությամբ շնորհավորեց բուլղարահայ համայնքին՝ ➤

# ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Կաթողիկոսն ընդունեց

վստահություն հայտնելով, որ նորընտիր առաջնորդը նվիրումով, սիրով ու նախանձախնդրությամբ կկատարի իր ստանձնած պարտականությունները:

Անդրադառնալով առաջիկա Մյուռոնօրհնության արարողությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց բուլղարահայ ուխտավորների ներկայության համար՝ նշելով, որ սրբալույս Մյուռոնի օրհնությամբ երկնքից իջնող աստվածային շնորհներն առատորեն կիեղվեն բուլղարահայ համայնքի զավակների վրա:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում վերհիշեց Բուլղարիա կատարած իր հովվապետական այցը՝ հավելելով, որ առիթ է ունեցել ականատեսը լինելու բուլղարահայ համայնքի ազգային-եկեղեցական աշխույժ կյանքին եւ քրիստոնեական արժեքների ու Եկեղեցու հանդեպ նվիրումին:

Վերջում իր օրհնությունն ու գնահատանքը բերելով ներկաներին՝ Նորին Սրբությունը հորդորեց Բուլղարիայի հայոց թեմում վառ պահել հայության ոգին եւ ամուր՝ Եկեղեցու եւ հայրենիքի հանդեպ սերը:



### Կարդինալ Լեոնարդո Սանդրիին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթոլիկ Եկեղեցու Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահ կարդինալ Լեոնարդո Սանդրիին: Կարդինալ Սանդրին՝ իբրեւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի ներկայացուցիչ, Մայր Աթոռի հրավերին ընդառաջ՝ ժամանել էր Հայաստան՝ մասնակցելու սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությանը:

Ողջունելով Արեւելյան Եկեղեցիների ժողովի նախագահին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ վերջինիս այցը Մայր Աթոռ վկայությունն է Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերությունների:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Ֆրանցիսկոս Պապի՝ ապրիլի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում մատուցած սրբազան Պատարագի արարողությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ միջեկեղեցական գործակցության մեջ սերն ու զորակցության ոգին շարունակեն մշտապես ուղեկից լինել Քրիստոսի Եկեղեցուն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

*26 սեպտեմբերի*



### Ս. Էջիդիոյի համայնքի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սան Էջիդիոյի համայնքի պատվիրակությանը՝ գլխավորությամբ հայր Մարկո Գնավիի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց համայնքի պատվիրակությանը՝ Մյուռոնօրհնեքի արարողության առիթով կազմակերպված միջոցառումներին մասնակցություն բերելու համար: «Ուրախ ենք այն բարեկամական զգացումի համար, որ դուք ունեք Հայոց Եկեղեցու հանդեպ»,- նշեց Հայոց Հայրապետը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայոց ցեղասպանության եւ խորհրդային աստվածամերժ տարիների հետեւանքով Հայոց Եկեղեցու կրած կորուստներին եւ ներկայիս ժամանակներում հավատի ու հոգեւոր-եկեղեցական կյանքի վերածննդին:

Խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների ու համագործակցության մասին:



### Ասորի Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ասորի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներին՝ Բեյրութի Միտրոպոլիտ Նորին Սրբազնություն Մոր Կլեմես Դանիել Խուռիին, Պատրիարքարանի արարողակարգի բաժնի ղեկավար Նորին Սրբազնություն Մոր Մորիս եպիսկոպոս Ամսինին, ինչպես նաեւ՝ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Մորան Մոր Բեչարա Բուտրոս ալ Ռահի ներկայացուցիչ Նորին Սրբազնություն Բուլոս արք. Սայային:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուրախություն հայտնելով Մյուռոնօրհնեքի արարողությանը բարձրաստիճան հոգեւորականների մասնակցության համար, նշեց, որ նրանց աղոթքները շատ կարեւոր են հայ ժողովրդի, Հայաստանի եւ Հայ Եկեղեցու համար:

*«Աղոթքն ավելի զորավոր է, երբ արվում է եղբայրների հետ միասին»,-* այս առնչությամբ ընդգծեց Նորին Սրբությունը՝ վստահություն հայտնելով, որ ս. Մյուռոնի օրհնությամբ Աստծու շնորհները երկնքից առատորեն կիեղվեն ամենքի վրա:

Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում անդրադարձավ նաեւ Սիրիայում եւ Լիբանանում առկա դժվարություններին՝ հայցելով Երկնավորի օրհնությունն ու զորակցությունը քրիստոնյա եղբայրներին:

Հանդիպմանը ներկա էին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե վրդ. Անանյանը:

*27 սեպտեմբերի*



### Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը՝ գլխավորությամբ Տամբովի եւ Ռասկազովսկի գերաշնորհ Թեոդոսիոս Միտրոպոլիտի:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց, որ քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, ընդառաջ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրավերին, սրբալույս Մյուռոնի օրհնության արարողության առիթով ժամանել են Հայաստան: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության ոգեկոչման 100-րդ տարում քրիստոնեական Եկեղեցիների ներկայությունը հոգեւոր մեծ զորակցություն է Հայ Եկեղեցուն եւ հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ջերմ հարաբերություններին՝ նշելով, որ դրանք նաեւ երկու ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի արտահայտությունն են:

Իր հերթին Միտրոպոլիտ Թեոդոսիոսը Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի եղբայրական ողջույնները՝ ուրախություն հայտնելով, որ Հայ Եկեղեցու կյանքում այս կարեւոր արարողությանն իր մասնակցությունն է ունենալու:

Միտրոպոլիտը խոսեց նաեւ Հայ Եկեղեցու կողմից՝ Մեծ եղեռնի նահատակների սրբադասման մասին: Այս կապակցությամբ Ռուս Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչը նշեց, որ յուրաքանչյուր ժողովուրդ եւ երկիր եթե չեն հիշում անցյալը, չունեն նաեւ ապագա:

Զրույցի ընթացքում Նորին Սրբազնությունը Ամենայն Հայոց Հայրապետին տեղեկացրեց Տամբովի հայ համայնքի հոգեւոր-ազգային կյանքում տեղ գտած կարեւոր իրադարձության՝ հայկական եկեղեցու հիմնարկեքի մասին:

# Մայր Աթոռում տեղի ունեցավ սբ Մյուռոնի բաշխումը

Սեպտեմբերի 29-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը տեղի ունեցավ սրբալույս Մյուռոնի բաշխման արարողությունը:



Նորօրհնյալ Մյուռոնի բաշխումն սկսվեց միասնական՝ Տերունական աղոթքով: Ապա ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ ուրախությամբ փաստելով, որ տոնական օրերը Մայր Աթոռում եզրափակվում են «Հաղթության սրբալույս Մյուռոնի» բաշխմամբ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սբ Մյուռոնով լի անոթները փոխանցեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արք. Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության 37 թեմերի առաջնորդներին:

Բաշխման արարողությունից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկաներին:

Փառք եւ գոհություն հայտնելով Բարձրյալին Մյուռոնօրհնության արարողությունն անցկացնելու շնորհի համար՝ Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. *«Սրբալույս Մյուռոնի օրհնությունը, որ ամեն յոթ տարին մեկ կատարվում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, իր մեջ հոգեւոր նորոգության խորհուրդ ունի, եւ ստեղծված մթնոլորտը, աշխարհի տարբեր կողմերից մեր հավատացյալ խանդավառ մասնակցությունը վկայությունն է մեր հոգեւոր զարթոնքի: Աշխարհասփյուռ մեր զավակներն անհամբերությամբ սպասում են, թե երբ են իրենց առաջնորդները սրբալույս Մյուռոնը տանելու թեմեր եւ այնտեղ կազմակերպելու Ջրօրհնյաց արարողություններ, որպեսզի դրանց միջոցով հավատացյալները կարողանան արժանանալ սրբալույս Մյուռոնի շնորհներին»*:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց նաեւ Մայր Աթոռի մուտքին կանգնեցված Դերջանի Ապարանից Ս. Դավիթ վանքի երկու խաչքարերի նմանօրինակների օծմանը: *«Դրանք կանգնեցրեցինք այս նվիրական պահին՝ որպես ուխտի խաչքարեր ինչպես մեր ժողովրդի, այնպես եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի յուրաքանչյուր այցելուի համար, որպեսզի նրանք, հաղորդ դառնալով այդ խաչքարերի խորհրդին, ծանոթանալով դրանց պատմությանը, ոչ միայն անդրադառնան այն ահավոր ոճրին, որ տեղի ունեցավ մեր ժողովրդի նկատմամբ 1915 թվականին, այլ նաեւ դատապարտեն նման ոճիրները, իրենց ջանքն ու ներդրումը բերեն, որպեսզի աշխարհում կանխվեն մարդկային կյանքի հանդեպ նմանօրինակ ոճիրները»*,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը:



Խոսելով հոգեւորականների առաքելության մասին՝ Նորին Սրբությունը հայցեց Երկնավորից, որ հոգեւորականները նորոգված հոգով վերադառնան իրենց թեմերը, իրագործեն հավատավոր զավակների սպասումները եւ հոգեւոր ու հոգեկան մխիթարություն բերեն նրանց: Հայոց Կաթողիկոսը հավելեց, որ յուրաքանչյուր հայ եկեղեցականի ուսերին նվիրական պարտք կա ծանրացած՝ անստվեր եւ պայծառ պահելու Եկեղեցու բարի համբավը, որպեսզի յուրաքանչյուր հայորդի խոնհարումով արտաբերի Հայ Եկեղեցու անունը եւ երախտագետ սրտով առ Աստված աղոթք բարձրացնի ազգային կյանքում հայ եկեղեցականության բերած ծառայության համար:

Վեհափառ Հայրապետը նաեւ մաղթեց, որ Տերը հաստատուն պահի Առաքելական Սբ Եկեղեցին՝ իր Նվիրապետական Աթոռներով հանդերձ, եւ նրա հոգեւոր դասին զարդարի սրբալույս Մյուռոնի շնորհներով՝ խանդավառ սրտով շարունակելու իր առաքելությունը Աստծու փառքի եւ հայ ժողովրդի հարատեւության համար:

Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Մյուռոնօրհնության արարողության ու հարակից միջոցառումների կազմակերպիչ հանձնախմբին եւ Մայր Աթոռի պաշտոնեությանը՝ նվիրյալ ծառայության համար:

## «Մյուռոնօրհնություն» թեմային նվիրված նամականիշով գեղաթերթիկի մարում Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Սեպտեմբերի 29-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ «Մյուռոնօրհնություն» թեմայով նամականիշով գեղաթերթիկի մարում: 20000 տպաքանակով թողարկված նամականիշը պատկերում է Մայր տաճարը եւ սրբալույս Մյուռոնի կաթսան:

Արարողությունն սկսվեց մատենադարանի տնօրեն Արարատ քհն. Պողոսյանի բացման խոսքով:



Նամականիշը մարվեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի, ՀՀ կապի եւ տրանսպորտի փոխնախարար Գագիկ Թադեւոսյանի եւ «Հայփոստ» ՓԲԸ գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի կողմից:

Մուշեղ սրբազանը, շնորհավորելով ամենքին, ասաց. *«Այս պահից Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ սրբալույս Մյուռոնի կաթսայի պատկերով այս նամականիշը պիտի հասնի աշխարհի բոլոր ծագերը՝ դառնալով Հայ Եկեղեցու թարգմանը եւ դեսպանը»*: Արդյունավետ գործակցության համար սրբազանը շնորհակալություն հայտնեց «Հայփոստի» ներկայացուցիչներին եւ ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարությանը:

Իր հերթին ՀՀ կապի եւ տրանսպորտի փոխնախարար Գագիկ Թադեւոսյանը նշեց, որ սրբալույս Մյուռոնի կաթսային նվիրված նամականիշը, ըստ էության, կդառնա մատենագիտական արժեք: Նա կարեւոր համարեց նաեւ այն, որ նամականիշը մարվում է 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության ոգեկոչման 100-րդ տարում:

Արարողությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ եւ Պահպանիչ աղոթքով:

## «Սրբալույս Մյուռոն». ցուցահանդես Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Մյուռոնօրհնության առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ «Սրբալույս Մյուռոն» խորագրով կերպարվեստի ցուցահանդես-վաճառք, որի հասույթն ուղղվելու է ի նպաստ սիրիահայության կարիքների:

Ցուցահանդեսը կազմակերպվել էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ Հայաստանի նկարիչների միության համատեղ ջանքերով: Ներկայացված էր հոգեւոր թեմատիկայով հայ ժամանակակից արվեստի շուրջ 40 ստեղծագործություն՝ քանդակ եւ գեղանկար:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մյուռոնօրհնության խաչքավոր Հայկ Տիտիզյանը՝ ընտանիքի անդամների հետ, Մյուռոնօրհնեքի առիթով Մայր Աթոռ ժամանած թեմակալ առաջնորդներ, բարերարներ եւ ուխտավոր հայորդիներ:

Բացման արարողությանը հանդես եկավ «Սաղմոսերգու» հոգեւոր երաժշտության արական երգչախումբը՝ խմբավարությամբ Վահե Բեգոյանի:

# Անկախության Մյուռոնօրհնությունները

Սրբազան ավանդության համաձայն՝ երբ Քրիստոսի աշակերտները մեկնում են տարբեր կողմեր՝ Ավետարանը քարոզելու, Թադեոս առաքյալը գալիս է Հայաստան՝ իր հետ վերցնելով մի սրվակ Մյուռոն, որը, կրկին ըստ ավանդության, օրհնել էր մեր Տեր Հիսուս Քրիստոսը:





Նահատակությունից առաջ Թադեոս առաքյալն այդ Մեռոնը թաքցնում է մի ծառի փչակում: Հետագայում տեսիլքով Մեռոնի տեղն իմանում է սբ Գրիգոր Լուսավորիչը եւ Տրդատ թագավորի աջակցությամբ այդ վայրում՝ Եղրդուտում, կառուցել տալիս Հովհաննես Մկրտչի անունով մի եկեղեցի, հիմնում միաբանություն: Ասում են, թե այստեղ էլ պահպանության է տրվում թանկարժեք Մեռոնը: Երբ Լուսավորիչը կատարում է հայոց առաջին Մեռոնօրհնությունը, իր օրհնած Մեռոնին խառնում է Թադեոս առաքյալի բերածից: Եվ այսպես սկզբնավորվում է ոչ միայն Հայոց Մյուռոնը, այլեւ լուսավորչահաստատ ավանդությունը, ըստ որի՝ մեր Եկեղեցում Մյուռոնն օրհնելու շնորհը պատկանում է միմիայն Ամենայն Հայոց կաթողիկոսին:

**2015 թ. սեպտեմբերի 27-ի այս Մյուռոնօրհնությունը** մեր անկախ պետականության օրոք կատարվող հինգերորդ Մյուռոնօրհնությունն է:

**Առաջին Մյուռոնօրհնությունը** կատարեց Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը 1991 թ. սեպտեմբերի 29-ին՝ այն կոչելով **«Մյուռոն անկախության»**: *«Այսօր, մեր անկախ պետութեան հռչակումով, այժմէութիւն է ստանում նաեւ հայ ազգի Եկեղեցու հոգեւոր անկախութեան ամրապնդման հրամայականը, իբրեւ հայ ժողովրդի միակ հարազատ Եկեղեցին՝ անկախ օտար կենտրոններից:*

*Մեր նոր ինքնիշխան պետութեան անկախութեան հիմքերից մէկն է նաեւ հայ ազգի Եկեղեցու անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը:*

*Մենք դաւանում ենք Հաւատամքը՝*

*մէկ ազատ ազգութիւն,*
*մէկ անկախ պետութիւն,*
*մէկ անկախ ազգային Եկեղեցի:*

*Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու զօրութեամբ օրհնուած այս սրբալոյս Միւռոնը Մենք հռչակում ենք անկախութեան Միւռոն:*

*Հայե՛ր, հոգեւոր զաւակներ Մեր, այս սրբազան Միւռոնով միացէ՛ք, եղբայրացէ՛ք, եղէք մէ՛կ կամք, եղէք մէ՛կ ուրախութիւն, եղէք մէ՛կ ցաւ: Եղէք մէ՛կ ազգ, մէ՛կ ընտանիք, մէ՛կ ժայռացած երդում եւ հաւատացէք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ:*

*«Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք, ժողովո՛ւրդ մեր, առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Նորա գալստեանն: Չի դուք էք փառք մեր եւ խնդութիւն» (Ա. Թեսաղ. Բ 19-20): Այժմ եւ միշտ, ամէն»-,* բերկրությամբ լեցուն հորդորեց Հայոց Հայրապետը, ով եղավ «Հայաստանի ազգային հերոս» շքանշանի եւ անկախ Հայաստանի թիվ մեկ անձնագիրը կրողը:



**Երկրորդ Մյուռոնօրհնությունը** կատարեց Գարեգին Ա Ամենայն Հայոց հայրապետը եւ կոչեց այն **«Մյուռոն վերածննդյան»**՝ հորդորելով ս. Մյուռոնն առնչել կյանքին. «.... *Ս. իւղը՝ Միւռոնը՝ «այս նիւթեղէն զանգուածը, պանծալի պատկերն է երկնքի Արարիչին» (ս. Գրիգոր Նարեկացի): Եւ ինչպէս Արարիչը արարիչ է Իր արարածներով, այնպէս եւ իւղը Միւռոն է՝ իր առաքինագործ զօրութեամբ: Իւղը իւղ չէ իւղին համար, իւղը իւղ է մեզ համար. երբ կ՛ըլլայ Միւռոն, կը դառնայ, նոյն սբ Գրիգոր Նարեկացիի բառով, «ողորմութիւն», այսինքն՝ կը ճառագայթէ մեր կեանքին մէջ, կը մարմնաւորուի մեր գործերով, կը զարդարուի առաքինութեան գոյնով, կը դրոշմուի բարութեան բնութագիծով եւ կը պտղաբերուի երջանկութեան բարիքներով: Նոյն աստուածամերձ եւ սրբագիր բանաստեղծը կ՛ըսէ. «Ինչպէս խաւարը՝ լոյսին, ցաւը՝ առողջութեան, գիշերը՝ ցերեկին, մահը՝ կեանքին հետ չեն կրնար միասին ըլլալ, այնպէս եւ այս աստուածապարգեւ իւղին (սբ Միւռոնին) առջեւ կը խափանուին եւ բնաջինջ կ՛ըլլան չարին բոլոր գործերը» ( Բան ՂԵ 14):*

*Հետեւաբար Միւռոնը, որ պիտի օրհնենք Ս. Էջմիածնի մէջ, թող չըլլայ զուտ եկեղեցական, ազգային, սրբական, ծիսական աւանդութիւն: Թող դառնայ կեանքի մէջ թարգմանուող հոգեկան ու ազգային բարեշրջութիւն: Քրիստոս Օծեալը եկաւ եւ Իր Օծուածն ըլլալը արտայայտեց աղքատներուն, սրտով բեկուածներուն, ճնշուածներուն, զրկեալներուն, գերիներուն՝ կոյրերուն համար յոյս եւ լոյս դառնալով, դեղ ու դարման հանդիսանալով, բարիք եւ փրկութիւն բերելով….»:*

**Երրորդ Մյուռոնօրհնությունը** կատարեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը 2001 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայոց մեծ դարձի 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակում: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց. «*Շնորհընկալներ ենք մենք այսօր, քանզի Հայաստանի անկախության առաջին տասնամյակն ենք տոնախմբում Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի լուսեղեն խորհրդի ներքո…*

*Կենսահաստատ մեր հավատով եղեռնահար հայությունը մոխիրներից, մահվան գուբից ծնունդ տվեց Հայաստանի Առաջին Հանրապետությանը: Ճշմարտապես տեղին է եւս մեկ անգամ հաստատել մեր խոսքը 1700-ամյակի հայրապետական կոնդակում. «Չկա մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է հավատը: Քանի դեռ հայոց պատմության ընթացքով հաղթականորեն անցնում է լուսեղեն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հավատք ու խմորելով հոգի, հավատարմորեն պահելով մեր ժողովրդի ընթացքը դեպի Աստված»*:

**Չորրորդ Մյուռոնօրհնությունը** կատարվեց 2008 թ. սեպտեմբերի 28-ին, ինչպես միշտ՝ Վարագա Սբ Խաչի տոնին: Այդ ցնծալի օրը Նորին Սրբությունն իր խոսքում կարեւորեց. «.... *Սուրբ Մյուռոնի դրոշմով ճանաչում, ապրում, զգում եւ պահպանում ենք մեր հայ եւ քրիստոնյա ինքնությունը, մեր ազգային ամբողջականությունը: Մյուռոնադրոշմ հաղթել ենք վասն հավատի եւ վասն հայրենյաց կենաց եւ մահու մեր բոլոր պատերազմները, մեր գոյության եւ լինելիության բոլոր մարտերը: Մյուռոնի զորությամբ ու լույսով միավորել եւ միավորում ենք մեր անցյալը, ներկան եւ մեր զավակների ապագան…*

*Այսօր Մենք՝ Հայրապետ Հայոց, քաջալեր ենք ու լավատես, լի՝ ապագայի հույսերով, քանզի Հայաստան եւ Արցախ մեր հայրենի աշխարհում, վերազարթոնք ապրող մեր Եկեղեցու մեջ, մեր անկախ պետական կյանքում, բայց մանավանդ մեր ժողովրդի առողջ ներաշխարհում մենք զգում եւ տեսնում ենք արթնացող եւ հասունացող կամքն ու պահանջը մաքրվելու, սրբվելու, արդար հասարակություն եւ պետություն կառուցելու: Տեսնում ենք կամքն ու պահանջը ամոքելու ազգային վերքերը, հաղթահարելու եկեղեցական մեր կյանքի դժվարությունները, ժամանակի բերած բաժանումներն ու տարակարծությունները, որպեսզի հայոց անդաստանում միշտ եւ առհավետ լինենք մեկ եւ միասնական՝ մեկ ազգ, մեկ հավատք, մեկ Եկեղեցի՝ միասնական Հայրենիքով եւ միակամ ու միախորհուրդ ընթանանք դեպի նոր ձեռքբերումներ, մեր արդար իղձերի ու արժանի նպատակների իրագործման Աստծո կողմից նախախնամված բարի հանգրվաններ:*

*Լավատես ենք ու քաջալեր Աստծո՝ ազգիս պարգեւած բարիքներից, աշխարհասփյուռ հայ կյանքի մեջ պտղաբերող բարի գործերից, իրականություն դարձող ծրագրերից, որ ծառայում են մեր ժողովրդի բարօրությանը, մեր Հայրենիքի բարգավաճումին, մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը: Միավորենք ու զորացնենք մեր ջանքերը, որ հայրենի մեր երկիրը ծաղկունք ապրի աստվածաշնորհ խաղաղության ու ազատության մեջ եւ հզորանա տիրավանդ ճշմարիտ սիրով, իր զավակների նվիրումով, տաղանդով ու արարումով: Խնամք տանենք ու հոգանք, որպեսզի մեր աշխարհասփյուռ Եկեղեցին միշտ պայծառ լինի նախնյաց ավանդով ու կարգավորությամբ, Էջմիածնակնիք հայ հոգուն հավատարիմ աստվածասեր ժողովրդով»:*

Հավելենք, որ Սբ Հոգու նյութեղեն արտահայտություն հանդիսացող Մյուռոնը մեր Եկեղեցում ունի լայն գործածություն: Սրբալույս Մյուռոնով օծում ենք ոչ միայն մկրտվողին, ոչ միայն հոգեորականներին՝ ձեռնադրելիս, այլեւ եկեղեցին, սբ Սեղանը, մկրտության ավազանը, պաշտամունքային առարկաները՝ Ավետարանը, խաչը, եկեղեցական սպասքը:

Եվ թո՛ղ, ինչպես սբ Մյուռոնի օրհնության աղոթքում է ասվում, *«Զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւղս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր..., սրբութիւն հոգւոց եւ մարմնոց ..., կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին»*:

# ՈՒՇԱԳՐԱՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ

***Հայ Առաքելական Եկեղեցու եւ հավատացյալի համար Մյուռոնն առանձնահատուկ նշանակություն ու խորհուրդ ունի՝ բոլորովին տարբեր քրիստոնյա այլ եկեղեցիներից: Միայն Հայ Եկեղեցում է, որ Մյուռոնօրհնությունը կատարվում է մեծահանդես արարողությամբ: Միայն Հայ Եկեղեցում է, որտեղ Մյուռոնն առավել ընդարձակ գործածություն ունի:***

***Սրբազան այս յուղի մասին տարբեր ժամանակներից մեզ են հասել ուշագրավ մի շարք պատմություններ, որոնք ընդգծում են հայկական Մյուռոնի նկատմամբ բացառիկ վերաբերմունքը: Դրանք պատմություններ են թշնամուց պահ տրված եւ կամ թշնամուն ավար դարձած, հարյուրամյակներ անց գտնված եւ կամ նավաբեկությունից հրաշքով փրկված Մյուռոնի մասին:***

## Պահ տրված եւ դեռ չգտնված Մյուռոնը

11-12-րդ դարերի պատմիչ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ առ այսօր Ախուրյանի ջրերում է Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի պահ տված Մյուռոնը: Իսկ պատմությունը հետեւյալն է:



Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը, 1049 թ. հունաց Մոնոմախ կայսեր կողմից կանչված լինելով Կ. Պոլիս, խորհում է, որ այլեւս ապահովված չէ իր վերադարձը: Այս մտահոգությամբ էլ նախ նշանակում է կաթողիկոսական տեղապահ, ապա՝ 400 լ Մյուռոն է պահ տալիս Ախուրյանի ջրերում, որի մասին եւ վկայում է պատմիչը. *«Նոյն օրհնակաւս խորհեցաւ եւ յաղագս Միւռոնին օրհնեալ ծիթոյն՝ օծմանն հաւատոյ Հայաստանեայցն. պահեաց ի յԱխուրեն գետն երկաթի ամանօք իբրեւ լիտր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հոռոմոց. կայ պահեալ մինչեւ ցայսօր ժամանակի. ի գիշերի արարեալ զայս՝ մերձ ի դուռն քաղաքին Անւոյ»*:



Նպատակը մեկն էր՝ հունաց հնարավոր ոտնձգությունից զերծ պահել հայոց Մյուռոնը՝ հայ ժողովրդի ազգային ինքնության վկայականը: Այս մասին ուշագրավ է նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանի մեկնաբանությունը, թե *«այս ալ նոր փաստ մըն է, թէ Պետրոսի յունասիրութիւնը քաղաքականէն անդին չէր անցներ, եւ կրօնական համակերպութեան չէր մտներ»*:

Ախուրյանի մեջ թաղված Մյուռոնը, ըստ Օրմանյանի, *«այլեւս հանուած պիտի չըլլայ, վասն զի պատմիչը կը վկայէ իր ժամանակին համար, թէ կայ պահեալ մինչեւ ցայսօր ժամանակի: Անկէ ետքն ալ փնտռող եւ հանող եղած չէ, եւ կրնայ գրգռել Անիի մէջ պեղում կատարողներու հետաքրքրութիւնը»*:

Այս պատմությունից անցել է շուրջ 1000 տարի: Հազիվ թե Ախուրյանի ջրերում երկաթե տարաները հարյուրամյակներ շարունակ անվնաս պահեին հայոց Մյուռոնը: Այսուհանդերձ, համաձայն Ուռհայեցու, 400 լ Մյուռոնը դեռեւս այնտեղ է՝ Ախուրյանի ջրերում:

## Թշնամուն ավար դարձած Մյուռոն

Հայ մատենագրության մեջ, սակայն, քիչ չեն նաեւ թշնամուն ավար դարձած Մյուռոնի մասին հիշատակությունները:

Օրմանյանն իր «Ազգապատումում» պատմում է, օրինակ, թե ինչպես թուրքմեն զորքերը 1461 թվականին Սսում *«թալանեցին զվանքն եւ զսուրբ Միւռոնն եւ զամենայն սրբութիւնս»*:

16-17-րդ դարերի տաղասացներ Մինաս Թոխաթցին եւ Հակոբ Թոխաթցին ողբում են Օլախաց երկրի (Ռումինիա) հայերի ճակատագիրը, որոնք ենթարկվում են ռումին բռնակալ Շտեֆան իշխանի հալածանքներին: Ավերվում եւ թալանվում են հայկական եկեղեցիները:

Այս մասին է վկայում Մինաս Թոխաթցին «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն» չափածո գրվածքում.

*Յառաջն իւր սուրբ տունն մատնեաց,*
*ԶՍուրբ Մեռոնն յերկիր ցրուեաց,*
*Զիւր սուրբ գրեանքն հրով այրեաց,*
*Զեկեղեցւոյ հիմն շրջեաց:*

Ռումինահայության հալածանքների մասին է նաեւ Հակոբ Թոխաթցու համանուն երգը, որտեղ կրկին պատմվում է, թե ինչպես թշնամին, «նման իժի եւ քարբ օձին», թալանելով եկեղեցին, «զՍուրբ Մեռոնն եւ զգրեանքն առին»:

Սիմեոն Կաթողիկոսի «Յիշատակարանում» տեղ գտած մի գրություն եւս թալանված Մյուռոնի մասին է: Հարություն անունով վարդապետը Սիմեոն Կաթողիկոսի ընտրության հանրագիրը Պոլիս տանելու ճանապարհին ենթարկվում է ավազակային հարձակման, եւ ինչպես «Յիշատակարանում» է նշվում, *«Եւ տարեալ գողքն զբեռն զայն՝ (յորում եղեալ էր Մեռոնն սրբալոյս, գրեանքն Յարութիւն վարդապետին, եւ համայն նուիրական եւ վասն սրբազան Վեհին թուղթքն կաթողիկոսութեան), զորս զամենայսան պատռեն եւ զսուրբ Մեռօնն ի տեղի ծիթոյ վաճառեն»*:

Սահմանափակվենք միայն այսքանով, քանի որ Հայ Եկեղեցին դարեր շարունակ ենթարկվել է թշնամու ասպատակություններին, եւ թալանված Մյուռոնի մասին վկայությունները եւս բազմաթիվ են:

## Նավաբեկությունից փրկված Մյուռոնը

Սրբալույս Մյուռոնի մասին հրաշալի պատմություններից է նավաբեկությունից փրկված Մյուռոնի պատմությունը, որի մասին գրում է Հակոբ Ե Շամախեցի Կաթողիկոսի Հնդկաստանի նվիրակը՝ Հովհաննես վարդապետը:

Կալկաթա մեկնող նավը ենթարկվում է նավաբեկության: Նավաբեկությունից փրկված փոքրաթիվ ուղեւորների թվում էր նաեւ Հովհաննես վարդապետը, որն էլ հետագայում նամակով հայտնում է, թե ինչպես է խորտակված բեռից հրաշքով փրկվել միայն սրբալույս Մյուռոնը: *«Եւ թէ զիարդ Միւռոնն սրբալոյս ընկղմի ի ծովն ելով յարկեղ իմիք փակեցելում, ընդ որում լինին գրեանք եւ այլ գոյք Յովհաննէս վարդապետին, եւ յորժամ ի ցամաք ելանեն նոքա, յետ քանեաց աւուրց ի շրջիլն իւրեանց յհետ ուտելի նիւթց՝ գտանեն ամբող կնքով եւ մեծահրաշ սքանչելեօք ելեալ ի ցամաք սրբալոյս Մեռոնն միայն, իսկ արկղն այլ գոյքն անդէն ի խորս ծովուն մնացեալք»*:

## Սբ Ներսես Շնորհալու՝ գտնված եւ կորսված Մյուռոնը

1839 թվականին Խարբերդի նահանգի Խուլեի վանքի սբ Գեւորգ տաճարի նորոգությունների ժամանակ գտնվում է մասունքով մի տուփ եւ Մյուռոնի սրվակ՝ Ներսես Շնորհալու կնիքով դրոշմված: Մոմապատ շորով ծրարված գտածոյի հետ էին նաեւ մագաղաթյա հիշատակագրեր, որոնցից մեկը կնքված էր Հեթում թագավորի կարմիր կնիքով:

Այս մասին ժամանակին ծանուցում են ազգային լրագրերը՝ հրապարակելով նաեւ հիշատակարանները: Վերջիններից պարզ է դառնում գտնված Մյուռոնի եւ նշխարների պատմությունը: Ավելի ուշ Ղեւոնդ Ալիշանը եւս Ներսես Շնորհալուն նվիրված իր աշխատությունում պատմում է Շնորհալու Մյուռոնի մասին:

Ներսես Շնորհալու կնիքը փաստում էր, որ Մյուռոնն օրհնվել է իր՝ Ներսես Կլայեցի Կաթողիկոսի ձեռքով: Մագաղաթյա հիշատակարանները պատմում էին հետագա եղելությունները:

Սուրբ հայրապետի մահվանից շուրջ 120 տարի անց, երբ եգիպտացիք նվաճում են կաթողիկոսանիստ Հռոմկլան, Հեթում Բ թագավորի քույրերից մեկը կարողանում է փրկել Հռոմկլայում պահվող Մյուռոնով սրվակը եւ հանձնում է եղբորը: Տարիներ անց արքայական ընտանիքի շառավիղներից Մելքոն անունով իշխանը Խարբերդի եպիսկոպոս Միքայելին է փոխանցում Մյուռոնով շիշը, ինչպես նաեւ՝ սբ Գեւորգի եւ այլ սրբերի նշխարներ: 1414 թվականին թանկագին այս ընծաները մեծաշուք հանդեսով դրվում են Խուլեի վանքում, իսկ վանքը վերանվանում է սբ Գեւորգի անվամբ: Կոստանդնուպոլսի անկումից հետո, երբ քրիստոնյա շատ եկեղեցիներ վերածվում են մզկիթների, վանքի սպասավորները, վախենալով, որ նույնը կարող է սպառնալ նաեւ իրենց վանքին, հողի տակ են թաքցնում սբ Գեւորգի տապանը, որտեղ եւ դրվում են սրբազան Մյուռոնը, եկեղեցու մյուս մասունքներն ու հիշատակարանները: Եվ միայն 1839 թվականին կրկին գտնվում են եկեղեցական այս սրբությունները:

Տարիներ անց Գարեգին եպս Սրվանձտյանցը, Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ներսես Վարժապետյանի ցուցումով շրջելով հայաբնակ գավառներում, Խուլեի վանքում առիթ է ունենում տեսնելու հարյուրամյակներ ապրած Մյուռոնի շիշը: *«Սուրբ Մեռոնի շիշը, որ փոքրիկ եւ բարակ ապակի է, կիսով չափ կը պարունակեր սուրբ Մեռոնը, թանձրացած»*,- Զմյուռնիայում հրատարակվող «Արեւելեան մամուլ» հանդեսում 1884 թվականին գրում է Սրվանձտյանցը՝ հրապարակելով նաեւ շշի հետ գտնված բոլոր հիշատակարանները:



Ցավոք, վանահայրն անհաղորդ է մնում Սրվանձտյանցի բոլոր հորդորներին՝ թանկարժեք Մյուռոնն ի պահ տալու Սբ Էջմիածնին կամ էլ Երուսաղեմի ու Կ. Պոլսի հայոց պատրիարքություններից մեկին:

«Վախնամ օր մը կորսուին»,- արդեն «Թորոս Աղբար» ուղեգրության մեջ մտավախություն է հայտնում մեծ բանահավաքը:

Սրվանձտյանցի անհանգստությունն անտեղի չէր: 1839 թվականին գտնված սբ Ներսես Շնորհալու Մյուռոնի մասին այլեւս տեղեկություններ չկան:

Իսկ այսօր մեզ հայտնի ամենահին Մյուռոնը պահվում է Մայր Աթոռ սբ Էջմիածնում: Այն շուրջ 400 տարվա վաղեմություն ունի:

***ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ***



— 353 —

դաք գերեզման զսուրբ Ս. Միւռոնս այս եդաւ յիշատակ Ս. Ներսիսի Կլայեցւոյն եւ եղբաւրն Գրիգորի. եւ փոքր մաս մի Ս. Կարապետի, եւ կնքեցաք. Կիրակոս եպիսկոպոս Արապգիր քաղաքին, Մատթէոս եպիսկոպոս Մելիտինու, եւ քոր եպիսկոպոսն Աստուածածնայ եւ Արգլմնեհու երկուց նորաշէն վանուց, որ հրամանաւ Մելքաւն ամիրային Նաւին Խարբերդու դաշտն եւ միայն խրատեն ժողովուրդն. մենաստան դաշտիս է միան Ս. Գէորգ, որ ունի հինգ հազար տուն ժողովուրդ, եւ չորս եկեղեցիս Խարբերթու բացի Ասորւոց, որոյ քաղաքիս եւ դաշտիս Խարբերթու ամից մոխիրն Առաջնորդ եմ ես. բայց նզովեմ ես եւ երկու եպիսկոպոսն, եւ Գէ. Բ. քաւր եպիսկոպոս որդիս, ով որ բացցէ սուրբ շիրիմս Գէ. ԲԱ. եւ գողասցէ կամ այլ տեղ տարցէ, նզովեալ լիցի. եւ թէ վիճակն խլեսցէ, բաց ի վեց գիւղիցն, որ Ս. Աստուածածնայ և Արգլմնեհի եմ պարոն Մելքաւնն, եւ գեղեցիկ կարգադրութիւն մեր խափանեսցէ՝ մահու եւ դժոխոց արժանիս լիցի. Անուն հաւրն եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. ամէն»։

Կնքէ Գէորգ եպս. Կնքէ Միքայէլ եպս. Զ. Դ. Կնքէ Կիրակոս եպս.

Կնքէ Կիրակոս եպս.

Կնքէ Ներսէս Կլայեցւոյ. Ս. Փ. Է.

(Սուրբ Միւռոնի շիշին ձեւն:)

Կնքէ Հեթում. Ռ. Հ. Կնքէ Միքայէլ եպս. Զ. Դ.

Digitized by Google

*«...Մատո, Տէ՛ր Յիսուս, վիրացս աներեւութից զայս ծէք լուսանիւթ,*
*եւ արկ ի սոյն խարանս խոցոյ մահացուի*
*զկաթուած օրհնութեան իւղոյդ փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ,*
*միութեամբ արարչականաւ պատսպարեալ պատանօք խնամոց...»:*

***Ս. Գրիգոր Նարեկացի***

# ՅՈՒՂ ՓՐԿՈՒԹՅԱՆ



Մյուռոնը կամ Մեռոնը (հուն.՝ անուշաբույր յուղ, ձեթ) Քրիստոնեական Եկեղեցում օծման համար կիրառվող սրբազան հոտավետ յուղն է: Սրբալույս Մյուռոնի նախատիպը Հին Կտակարանի «սրբության» կամ «սուրբ օծության» յուղն է:

Աստվածաշունչը վկայում է, որ Ինքը՝ Աստված է Մովսես մարգարեին հայտնել անուշահոտ Մյուռոնի բաղադրության, պատրաստման ու գործածման մասին. *«Վերցրո՛ւ անուշահոտ համեմունքներ... Դրանցից կպատրաստես սուրբ օծության համար յուղ այնպես, ինչպես վարպետ յուղագործները ձեթ են պատրաստում: Այն սուրբ օծության համար յուղ թող լինի: Դրանով կօծես վկայության խորանը, վկայության տապանակը, զոհասեղանն ու նրա ամբողջ սպասքը, աշտանակն ու նրա ամբողջ սպասքը, խնկարկության սեղանը, ողջակեզների սեղանն ու նրա ամբողջ սպասքը, ավազանն ու նրա պատվանդանը: Կսրբագործես դրանք, եւ դրանք կլինեն սրբությունների սրբություն: Ամեն ոք, որ դիպչի դրան, կմաքրվի: Կօծես Ահարոնին եւ նրա որդիներին, կսրբագործես նրանց, որպեսզի նրանք ինձ համար քահանայություն անեն»* (Ելք Լ 22-30):

Հայտնի է, որ դեռեւս վաղնջական ժամանակներից արեւելյան ազգերը՝ մասնավորապես հրեաները, տոնական օրերին (Սաղմ. ԺԲ 6, Ամոս Զ 6) օգտագործել են ձիթենու յուղ՝ խառնած բազմատեսակ անուշահոտ բույսերի, համեմունքների ու նյութերի հետ (խնկեղեգ, ծաղիկներ, խունկ, կնդրուկ, զմուռս եւ այլն):

Հին Ուխտի համաձայն՝ օծման այս անուշաբույր յուղն այն նյութեղեն միջնորդն է, որը մարդկանց եւ իրերի վրա տեսանելի, նկատելի է դարձնում Սուրբ Հոգու շնորհներն ու զորությունը: Այսինքն՝ սրբության յուղով օծված մարդիկ եւ պաշտամունքի առարկաները տարբերվում, զանազանվում են մյուսներից. հենց այդ օծումով՝ աստվածային զորությամբ, նրանց հաղորդվում է սրբազան ու նվիրական բնույթ:



Այսպիսով՝ Հին Կտակարանում օծման յուղն աստվածային շնորհի նյութեղեն դրսեւորումն է, որով սրբագործվում են Տիրոջ ընտրյալները, Իսրայելի (Աստծո ժողովրդի) վրա կարգված թագավորները, ինչպես նաեւ տաճարն ու ծիսապաշտամունքային առարկաները: Այս յուղով օծվելուն արժանանում էին քահանաները, մարգարեներն ու թագավորները, որոնք կոչվում էին նաեւ «Աստծո օծյալներ». հատկանշական է, որ սուրբ յուղի կիրառումն այլ նպատակներով՝ հոգեւոր անդաստանից դուրս, խիստ արգելվել է: Դեռեւս Ելից գրքում Աստված պատվիրում է. *«Մարդու մարմնին թող չքսվի այն: Ձեզ համար նույն բաղադրությամբ նման բան չպատրաստեք, որովհետեւ դա սրբություն է եւ ձեզ համար սրբություն էլ թող մնա: Ով այդպիսի բան պատրաստի, եւ ով դրանից օտարականի տա, թող վերանա իր ժողովրդի միջից»* (Լ 32-33):

Սուրբգրային բազմաթիվ հատվածներում հիշատակություններ կան սրբության յուղով օծման արարողության մասին, որն իբրեւ ամենագութ Աստծուց շնորհված գաղտնասուրբ եւ նվիրական խորհուրդ՝ հայտնում էր Ս. Հոգու էջքի մասին:

Աստվածաշնչի համաձայն՝ օծման յուղն այն նյութեղեն միջնորդն է, որը աստվածային շնորհը ներգործող է դարձնում մարդկանց միջեւ եւ իրերի վրա:

Փրկչի՝ Քրիստոսի ծնունդից հետո դեռեւս կենսունակ էր հյուրի գլուխը կամ ոտքերը անուշահոտ յուղով օծելու խորհրդանշական արարողությունը (Մարկ. ԺԴ 3, Հովհ. ԺԲ 3). ազնվագույնն էր համարվում նարդոսի յուղը (Երգ Ա 12, Մարկ. ԺԴ 3):

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհ գալով՝ սրբալույս Մյուռոնը նոր խորհուրդ ստացավ:

Ըստ եռամեծ վարդապետ սբ Գրիգոր Տաթեւացու՝ օծման յուղի անուշահոտությունն այլաբանորեն խորհրդանշում է աստվածային սրբությունը. բազմապիսի անուշաբույր ծաղիկներից պատրաստված սրբալույս Մյուռոնն Ինքը՝ Քրիստոս է. «Քո անունը թափված յուղ է անուշ» (Երգ Ա 2): Այսինքն՝ Փրկչի ծնունդով սուրբ օծության յուղը նոր խորհուրդ ստացավ. Աստծո միածին Որդին է Մյուռոնը, որ Իր աստվածության սրբասուրբ յուղը հեղեց մեր մարդկային մեղանչական բնության վրա, մաքրագործեց, սրբացրեց մեզ (Ղուկ. Դ 18):

Առաքելական թղթերում ակնարկվում է, որ վաղ քրիստոնեական համայնքներում յուղով օծելու սովորույթը նորոգվել եւ կիրառվել է որպես մկրտվելու՝ Սուրբ Հոգին ընդունելու նվիրական նշան:

Քրիստոնեական Եկեղեցում ընդունված է սրբալույս Մյուռոնի պատրաստման երկու եղանակ՝ պարզ, որի հիմքում ձիթենու անխառն յուղն է, եւ բաղադրյալ՝ ձիթենու մաքուր յուղին ավելացրած բալասան, զանազան անուշահոտ ծաղիկներ ու համեմունքներ:

Հայ Եկեղեցին ընդունել է Մյուռոնի պատրաստման բաղադրյալ եղանակը. ձիթենու մաքուր յուղին խառնվում է նարդոս, դարչին, խունկ, մշկընկույզ, ծառի խեժ, ծաղկահյութեր (72 տեսակի ծաղիկ), բալասան, ինչպես նաեւ կտավատի ձեթ ու գինի: Նյութերը որոշակի հաջորդականությամբ լցնում են օրհնված կաթսայի մեջ, երեք օր շարունակ եռացնում թույլ կրակի վրա, ապա ստացված զանգվածը քամում մաքուր կտավներով ու պահում մինչեւ Մյուռոնօրհնության օրը:

Հայ իրականության մեջ սրբալույս Մյուռոնի եւ Մյուռոնօրհնության վերաբերյալ պահպանվել են մի շարք ավանդություններ: Հնագույն մի ձեռագրի համաձայն («Էջմիածին», 1983, ԺԱ-ԺԲ, էջ 42)՝ Թադեոս առաքյալն է Հայոց աշխարհ բերել սուրբ Մյուռոնը, որը հասել է սբ Գրիգոր Լուսավորչին: Ըստ մեկ այլ ավանդության՝ հայկական Մյուռոնը Հիսուս Քրիստոսի ձեռքով օրհնված այն ձիթայուղն է, որ Նրա առաքյալներն են բերել Հայաստան (Մ. Օրմանյան, Հայ Եկեղեցին, 1993, էջ 168):

Արիստակես Լաստիվերցու եւ Մատթեոս Ուռհայեցու վկայության համաձայն՝ երբ Աստվածհայտնության տոնի ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետ Պետրոս Ա Գետադարձը Մյուռոնը հեղել է գետի մեջ, պայծառ լույս է ճառագել, ու գետի հոսքը առժամանակ անշարժացել, կանգ է առել՝ իբրեւ ապացույց հայկական Մյուռոնի սրբության եւ զորության:

Հայ Եկեղեցում սրբալույս Մյուռոնի կիրարկումն սկսել է դեռեւս առաքելական ժամանակներից: Ավանդության համաձայն՝ Հայոց առաջին Հայրապետ սբ Գրիգոր Լուսավորիչը Մյուռոն է օրհնել Ս. Էջմիածնում. այդ Մյուռոնը փոխանցվել է դարեդար ու եկել, հասել է մեզ: Մյուռոնօրհնեքի ընթացքում Լուսավորչի օրհնած սուրբ Մյուռոնից մշտապես խառնվում է նորի հետ՝ հնավանդ սրբալույս շնորհը նորին փոխանցելու նպատակով:

Մեր Եկեղեցին Մյուռոն օրհնում է 5-7 տարին մեկ. ըստ Հովհաննես Գ Օձնեցու հաստատած կանոնի՝ Մյուռոնօրհնության իրավունքը վերապահվում է միայն Կաթողիկոսին:

Ս. Գրիգոր Տաթեւացին սրբալույս Մյուռոնով օծվելու մասին գրում է. *«Զայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ Քրիստոս՝ Հոգին Սուրբ էջ ի վերայ նորա. զի էառ որպէս գլուխ մեր, եւ եհեղ յանդամս ի հաւատացեալս իւր, ըստ այնմ (որպէս իւղ զի իջանէ ի գլուխ)... Այսպէս ջրովն մկրտիմք ի Քրիստոս եւ որդիք Աստուծոյ կոչիմք, եւ իւղովն ի շնորհք Հոգւոյն Սրբոյ միաւորիմք»* («Գիրք հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 593):

Մենք՝ հայերս, հավատում ենք Մյուռոնի սրբարար զորությանը. հավատում, որ այն մաքրում, ազնվացնում, սրբացնում է մեր մարմինն ու հոգին: Ապավինում ենք այս սուրբ յուղի բուժիչ զորությանը՝ հավատալով, որ մեր մարմնի տկարություններն ու հիվանդությունները, մանավանդ՝ մեր հոգու վերքն ու կսկիծը մեղմանում, ամոքվում եւ սպիանում են Մյուռոնի զորությամբ:

Մյուռոնի հրաշափառ զորության մասին սբ Գրիգոր Նարեկացին գրում է. *«Եւ որպէս հրամանդ տէրունական օրհնաբանելի զքաւութիւն մեղաց ախտացելոցն նախավճռէիր, իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներեւակ ծածկապէս մտեալ՝ նոր կենդանածնէ...»* («Մատեան ողբերգութեան», Բան ՂԳ, Գ):

Սուրբ Հոգին սրբալույս Մյուռոնով մեզ է բաշխում իր շնորհները՝ հավատի լույսը, խոնարհության պսակը, բարոյական առաքինությունները, որոնք խաղաղեցնում են մեր փոթորկված հոգին, առաջնորդում դեպի աստվածային խաղաղավետ նավահանգիստը:

***Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ***



# Մտավորականները 21-րդ դարի Մյուռոնօրհնությունների մասին

## Սրբալույս Մյուռոնը՝ հայրենիքի վերաշինության խարիսխ

Ինձ համար այս Մյուռոնօրհնությունը եւս մի բացառիկ առիթ է՝ կրկին հանդիպելու իմ գրչեղբայր մտավորական հոգեւորականներին: Մի արտակարգ առիթ է, որ սրբալույս Մյուռոնի խորհրդով մենք՝ հայերս, ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի միանանք մեր Եկեղեցու սրբության եւ Հայրենիքի անկախության բարձր գաղափարներով:

ՀՀ գրողների միության նախագահի պաշտոնում առաջին անգամ մասնակից կդառնամ իմ գրչեղբոր՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ կայանալիք Մյուռոնօրհնության սրբազան հանդեսին: 20-րդ դարի հայոց վերջին Մյուռոնօրհնությունը թող դառնա մեր հայրենիքի վերաշինության ու ամրապնդման խարիսխը՝ մկրտությունը՝ այլեւս ամուր ու հաստատ հիմքերի վրա կանգնած մեր Սրբազան Հայրենիքի:

*Հրանտ Մաթեւոսյան*

## Մեր Մեռոնը մեր հայ լինելու խորհրդանիշն է

...Ես շատ փոքր չէին, երբ տատս ինձ տարավ Սբ Զորավոր եկեղեցի եւ մկրտել տվեց: Ես անշուշտ չէի ըմբռնում, թե ինչու են ճակատիս, վզիս, ձեռքերիս յուղ քսում, բայց մայրս, հարազատներս ասես հպարտությամբ էին ասում, որ ես օծված եմ: 1962 թվականին, երբ Վազգեն Ա Հայոց Հայրապետը Սբ Էջմիածնում կատարում էր Մեռոնօրհնությունը, ինձ առաջին անգամ բախտ վիճակվեց ներկա գտնվելու այդ արարողությանը: Հիշում եմ Վեհափառ Հայրապետի օրհնանքի մեջ ասված մի նախադասություն, որն ինձ համար մեր Մեռոնը դարձրեց ամենաասուրբ երեւույթը: Գնում եւ ձեռք ենք տալիս դարեր առաջ կառուցված մեր տաճարներին, վանքերին, եկեղեցիներին՝ ասես տեսնելու համար մեր ճարտարապետների ու կառուցողների մատների հետքերը, մուրճի հարվածները, քրտինքի կաթիլները, զգալու համար նրանց շնչառությունը, սակայն դարերի մեջ արեւը, անձրեւը, փոշին մաքրել են այդ ամենը, եւ հազիվ թե որեւէ բան մնացած լինի: Բայց երբ Վեհափառ Տերն ասաց, թե՝ «Ահավասիկ խառնում ենք այս Մեռոնին Մեռոն մը, որի մեջ կան Սբ Գրիգոր Լուսավորչի ձեռքը, ոգին ու շունչը», ես շատ խիստ հուզվեցի ու տպավորվեցի: Դրանից հետո, երբ ես հանկարծ ձեռք եմ տալիս այդ յուղին, զգում եմ, որ նրանում Լուսավորչից անպայմանորեն կենդանի մի բան կա: Եվ դա ոչ մի քաղաքական, հասարակական փոփոխությունների հետ կապ չունի եւ փոփոխության ենթակա չէ, որովհետեւ դար առ դար եւ ամեն դարի ու տասնամյակի մեջ, եթե նորմալ է ընթացել Մեռոնօրհնությունը, այսինքն՝ 7 տարին մեկ, նրա մեջ կաթիլ առ կաթիլ խառնվել են մեր բոլոր հայրապետների ոգին ու շունչը, օրհնանքն ու ձեռքը: Դա ամենակենդանի պատմությունն է մեր, որ ամփոփվում է մեկ կաթիլ յուղի մեջ: Երկրորդ կաթիլի անհրաժեշտությունը չկա: Այդ մի կաթիլում ամփոփված է մեր միակամության, միարյունության խորհուրդը: Ու երբ այն քսվում է



մեր ճակատին, նշանակում է, որ մենք 301 թվականից եկող ճակատներից մեկն ենք: Մեր Մեռոնը մեր հավատքի, մեր լեզվի, մեր մշակույթի եւ վերջապես մեր էության խորհրդանիշն է: Անշուշտ Մեռոն բոլոր քրիստոնյաներն էլ ունեն, բայց նրանց Մեռոնում մեր Լուսավորչի, ինչպես նաեւ Հայոց 131 հայրապետների շունչն ու ոգին, նրանց հայաշունչ օրհնանքը չկան: 70 տարի այս մասին չի խոսվել, չի ասվել, թե ինչու է անհրաժեշտ հայոց Մեռոնով հայի մկրտվելը: Այսօր ժամանակներն ուրիշ են, եւ այդ մասին պարտավոր ենք խոսել: Ես Մեռոնը հավասարեցնում եմ մեր դրոշին, զինանշանին, եւ նա, ով կոտնահարի մեր Մեռոնը, կոտնահարի մեր դրոշն ու մեր զինանշանը, մեր ազգային ոգին, այն խորհրդանիշները, որոնցով կոչվում ենք հայ:

*Գրիգոր Խանջյան*

## Միւռոնօրհնէքը համաժողովրդական ցնծութիւն

Ահա 17 դար է, ինչ Միւռոնօրհնէքը հանդիսանում է համաժողովրդական ցնծութիւն, համազգային տօն: Միւռոնի վերստեղծումը միայն եկեղեցական արարողութիւն չէ: Մեր Եկեղեցին ըստ ամենայնի ազգային է, եւ նրա նուիրական արարողութիւնները ազգային ու համաժողովրդական սրբազան երեւոյթներ են միաժամանակ:

Իր հերթին՝ Միւռոնօրհնէքը պատմական խոշոր իրադարձութիւն է՝ Եկեղեցու, ժողովրդի ու հայրենիքի յարատեւութեան մի իւրատեսակ խորհրդանիշ: Այդ խորհրդանիշն ուղեկցում է բոլոր սերունդներին՝ իւրաքանչիւր հայի հոգում ու գիտակցութեան մէջ նորից ու նորից վերահաստատելով ազգային ինքնութեան, քրիստոնէական հաւատի հրաշագործ ուժի եւ Հայաստան երկրի աստուածաշնչական էութեան զգացումն ու գաղափարը:

Անթիւ, անհամար հազարամեակների խորքից եկող հայ ժողովուրդը մշտանորոգ ու անսպառ է, ինչպէս հայկական Միւռոնը, որի աւիշն արարուել է տակաւին Մովսէսի եւ Աստուծոյ երկխօսութեան ժամանակներում՝ անարատաբար հասնելով Ս. Գրիգոր Լուսաւորչին, ապա եւ՝ մեզ:

Սուրբ Միւռոնը մեր հայկական արեան տեսանելի աւիշն է, մեր հայկականութեան կնիքը, որ դրոշմուում է մեր ճակատին եւ մեր հոգու վրայ՝ հօրից որդի, սերունդից սերունդ:

Միւռոնօրհնէքի տեսնելը, այդ սրբազան արարողութեանը ներկայ լինելը բախտաւորութիւն է: Եւ ես բախտաւոր եմ բազմակիօրէն, որովհետեւ ի մօտոյ տեսել եմ իմ կեանքում տեղի ունեցած բոլոր Միւռոնօրհնէքները: Այսօրուայ պէս յիշում եմ իմ տեսած առաջին Միւռոնօրհնէքը, որ կատարեց երջանկայիշատակ Վազգէն Առաջինը 1955 թ. հոկտեմբերին՝ 29 տարիների հարկադրեալ ընդմիջումից յետոյ: Այն ժամանակ հեռուստացոյց չկար: Միւռոնի օրհնութեան ընթացքն ու խորհուրդը մեկնաբանուում էին ռադիոյով. մեկնաբանն էր Բէյրութից ժամանած Գնէլ վարդապետ Ճէրէճեանը՝ մեզ՝ հայաստանցիներիս համար անսովոր իր շքեղ հայերէնով:

Սեպտեմբերի 22-ին ես շա՜տ մօտիկից տեսայ նորաօծ Բաց խորանի սուրբ Սեղանի վրայ կատարուած Միւռոնօրհնէքը՝ ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Դա իմ տեսած ութերորդ Միւռոնօրհնէքն է...

*Լեւոն Միրիջանեան*

## Մյուռոներգություն

Խորհուրդների մեջ ինձ համար ամենախորհրդավոր, ամենահայկականն ասես մկրտության արարողությունն է: Քահանան փոքրիկ սրվակից ամենայն զգուշությամբ մի քանի կաթիլ Մյուռոն է կաթեցնում նախ մկրտության ավազանի մեջ, ապա Մյուռոնը խաչանիշ քսում երեխայի ճակատին, աչքերին, ականջներին, քթին, բերանին, ձեռքերին ու ոտքերին: Ու մինչ մանուկն անգիտության մեջ ճղղում է, նրա ծնողները, կնքահայրն ու կնքամայրը, մյուս հարազատները ժպտում են երանությամբ: Այդ պահին կարծես նրանք էլ են սրբվում, մաքրվում, քրիստոնյա, հա՛յ քրիստոնյա դառնում, վերամիանում ազգային այն մեծ Տան, որ Եկեղեցի է կոչվում՝ Հայ Եկեղեցի:

Դրա համար են նման սրբությամբ վարվում Մյուռոնի հետ: Կնքահոր կրծքին ու ձեռքին գցված սրբիչն անպայման նոր, չօգտագործված պիտի լինի: Երեխայի ձեռքերին Մյուռոն քսելուց հետո անպայման ճերմակ ձեռնոցներ պետք է կապել՝ այն էլ 3 օր չհանելու պայմանով: Իսկ մյուռոնաօծ ջուրը պիտի չթափել կոյուղի, այլ պիտի ծաղիկ ու բույսեր ջրել, որովհետեւ Մյուռոնը սուրբ է, եւ սրբության հետ սրբորեն պիտի վարվել:

«Ճակատին Մյուռոն չկա»,- կնշանակի՝ անաստված է, հետեւաբար ընդունակ է անմարդկային արարքների: Եվ կամ՝ քրիստոնյա չէ, հայ չէ: Դարեր շարունակ մեր ժողովուրդն այսպես է մոտեցել Մյուռոնին, այդ իմացությամբ եւ այդ հավատքով է իր երեխային տարել եկեղեցի, մկրտել: Այդպես է ամբողջ կյանքի ընթացքում իր ճակատին զգացել քահանայի դրոշմած Մյուռոնը:

Ես չգիտեմ քրիստոնյա մյուս Եկեղեցիներում նույն իմաստն ու խորհուրդն ունի՞ օրհնված ջուրը կամ կոմունյոնը: Սակայն իմ Եկեղեցում, իմ ազգի մեջ դա այդպես է: Դա կրոնական խորհուրդ չէ միայն, այլ նաեւ միավորող ազդակ, որը միաձուլում է մեզ ոչ միայն ժամանակակից մեր հավատակից եւ արնակից մարդկանց՝ ազգակիցների հետ, այլեւ մեր դարավոր նախնիների, անգամ մեր հետնորդների հետ:

Մեր ճակատին միշտ Մյուռոն պիտի լինի:

*Հակոբ Ավետիքյան*

## Ծիր Խաչին

Անհաս է սրբազան Մյուռոնի խորհուրդը: Ըստ Նարեկացու՝ նույնիսկ հրեշտակներն են դժվարանում խոսքով բացատրել այն: Մարդուն ալեկոծող մեղաց ծովի դիմաց մեկ կաթիլ Մյուռոնը «նավահանգիստ մ'է խաղաղ», քանզի քրիստոնյայի ճակատին (եւ զգայարաններին) դրոշմված այդ խնկելի ցողը Սուրբ Հոգու նշանն է ու շնորհը, որ ադամորդիներին կապում է Փրկչի հետ: Ձիթենու արցունքներով ջրված, նահատակների արյամբ ցողված, անկեզ մորենու կրակով շիջված, Սուրբ Երրորդությամբ օրհնված քառասուն ծաղիկների փունջը Մյուռոն է դառնում. բուրմունքի ու գույների հավերժական սիմֆոնիա, որ երգի պես փոխանցվում է սերնդեսերունդ, սրտից սիրտ, շուրթից շուրթ: Չէ՞ որ ամեն նոր Մյուռոնօրհնեքին նախորդից խառնում են մի մաս, եւ այդ ծաղկաշղթան Գրիգոր Լուսավորչի եւ Թադեոս առաքյալի միջոցով ծիածանվում է մինչեւ Հիսուս Քրիստոս: Եվ ինչպես Ծիր Կաթինի աստղերն են այստեղից երեւում, տիեզերքից նայողն այստեղ տեսնում է բյուրավոր ցոլացող խաչեր. դա Ծիր Խաչինն է՝ սրբալույս Մյուռոնի կաթիլները, որ կրում են լույսով զարդարված «որդիք լուսոյ»: Եվ խաչակիցների այդ թափորն ուղղված է դեպի երկինք: Դա մեր ճանապարհն է ու ճակատի գիրը, որ գրված է Մյուռոնի մեջ թաթախված՝ Հորդանանի աղավնու ձյունից ճերմակ փետուրով, ահավասիկ՝

«Լինել ընդ Տեառն մերոյ Յիսուսի եւ ժառանգակից յաւիտենական կենացն»:

*Դանիել Երաժիշտ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**

**astghikstam@gmail.com**

**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**
**krishayas.wordpress.com**

Ստոր. տպագր. 2.10.2015 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**